Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐԸ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐԸ

ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԱԵԳՄՄ
2017

ՀՏԴ 355/359
ԳՄԴ 68.4
Փ 220

Նվիրվում է Հայոց բանակի բոլոր նվիրյալներին, ովքեր իրենց տեսանելի և անտեսանելի, հայտնի և անհայտ գործերով նպաստում են Հայրենիքի հզորացմանն ու հարատևությանը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)

Գիրքը հրատարակվում է ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած մրցույթի շրջանակներում՝ Արցախի գիտական կենտրոնի գիտխորհրդի երաշխավորությամբ

Փաշայան Հ.Ա.
Փ 220 **Պաշտպանության բանակի լավագույն դիրքապահները / Հ.Ա.Փաշայան.-Երևան: ԱԵԳՄՄ, 2017.-112 էջ:**

Գրքում ներկայացված են Պաշտպանության բանակի մարտական հերթապահություն իրականացնող զորամասերից 32 ժամկետային դիրքապահ զինվորների հայրենանվեր առաքելությունը, կյանքի ու մահվան սահմանագծում նրանց պատրաստակամությունը՝ պարտականությունները պատվով կատարելու, հայրենիքի սահմաններն անառիկ, իսկ հարազատների անդորրն անխախտ պահելու մասին հոդվածներ:

Ինչպես ցույց են տալիս զինծառայողների հետ ունեցած զրույցներն ու բոլոր ժամանակների ռազմարվեստի պատմության վերլուծությունները, բացի զենքից ու զինամթերքից, հաջողության հասնելու նախապայմաններից մեկն էլ մշտապես բարձր բարոյահոգեբանական որակներ ունեցող հայրենյաց պաշտպաններ ունենալն է: Ունենալով սահմանափակ մարդկային ռեսուրսներ՝ մենք դատապարտված ենք առաջնորդվել փոքր ուժերով մեծ խնդիրներ լուծելու մարտավարությամբ:

Գիրքը նախատեսված է մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության, հայրենյաց պաշտպանների մարտական ոգին բարձրացնելու և բոլոր նրանց՝ ում համար թանկ է հող հայրենին:

ՀՏԴ 355/359
ԳՄԴ 68.4

ISBN 978-9939-1-0637-3

© ԱԵԳՄՄ, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 7

ՄՈՒՏՔ 10

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐԸ 11

Ասատրյան Խորեն Իշխանի - «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ Է ՀՆԱՐԱՎՈՐ ԴԱՌՆՈՒՄ ԱՆԱՌԻԿ ՊԱՀԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԸ» 11

Ավոյան Ռոբերտ Երվանդի - ՀԵՐՈՍ ՏՂԱՆԵՐԻ ԱՐՅԱՄԲ ՍՐԲԱԳԾՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀՈՒՍԱԼԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ ԵՆ 14

Բլբուլյան Սարմեն Արշալույսի - «ՄԵՐ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՄԲ ԱՄՈՒՐ ԲՌՈՒՆՑՔ ԴԱՐՁԱԾ՝ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՐՎԱԾԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԵՎ ՁԱԽՈՂԵԼ ՆՐԱ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» 17

Դիլանյան Ցոլակ Դերենիկի - «ԴԻՐՔԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՆՆ Է» 20

Եգորյան Ատոմ Հարությունի - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԺԵՔՆԵՐ ԵՆ ԵՎ ՁԵՌՔ ԵՆ ԲԵՐՎՈՒՄ ԱՐՅԱՆ ԳՆՈՎ 23

Թառոյան Արմեն Հարությունի - «ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԱՐԺԱՆԻ ՀԱԿԱՀԱՐՎԱԾ ՀԱՍՑՆԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ» 26

Իսայան Նարեկ Նոյելի - «ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԶՍՊԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ԿԱՐԳԻ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻ ՈՒԺՆ Է» 29

Խաչատրյան Սամվել Հարությունի - «ԵՐԲԵՔ ՀՈՒՍԱԽԱԲ ՉԱՆԵԼՈՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ» 32

Խաչունց Գառնիկ Արմենի - «ԴԻՐՔԵՐՈՒՄ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻ ՄՇՏԱՐԹՈՒՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՆԱՌԻԿ ԵՆ, ԻՍԿ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ» 35

Խլղաթյան Տիգրան Հենզելի - «ԴԻՐՔԵՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻՍ ՀԱՄԱՏԵՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՍԻՔՆ Է» 38

Կարապետյան Կարապետ Առաքելի - ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՎ ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ Ի ՑՈՒՅՑ ԴՆԵԼՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 41

Հակոբյան Հայկ Ռաֆիկի - «ԴԻՐՔԵՐՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՎ ՓՈՐՁՈՒՄ Է ՕԳՆԵԼ ՄՅՈՒՍԻՆ՝ ՆՊԱՍՏԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ» 44

Ղազարյան Աշոտ Եղիազարի - «ՄԵՆՔ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐՆԵՐ ԵՆՔ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾ ԵՆՔ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ԱՅԴ ԿՈՉՈՒՄԸ» 47

Մազմանյան Աշոտ Արթուրի - «ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ԵՎ ՆՎԻՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է» 50

Մայսուրյան Գագիկ Միհրանի - ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏՔՆ Է 53

Մանուչարյան Մայիս Արսենի - ԴԻՐՔԻ ԱՎԱԳԸ 56

Մարգարյան Գուրգեն Ռուբենի - «ՄԱՍՆԱԳԻՏՈՐԵՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՐԵՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՎԵՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ» 59

Մարտիրոսյան Վահրամ Մարտունի - ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ 62

Մելքումյան Արման Պողոսի - «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼԸ, ՄԱՆԱՎԱՆԴ ԴԻՐՔԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» 65

Միքայելյան Կարեն Արմենի - «ՏՂԱ ԳԱԼԻՍ ԵՆՔ, ՏՂԱՄԱՐԴ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ» 68

Մխիթարյան Իշխան Գևորգի - «ԴԻՐՔԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՄՆԱՑՈՐԴ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ Է» .. 71

Մկրտչյան Դավիթ Գեղամի - «ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ԾԱՌԱՅԵԼՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է» 74

Յավրումյան Էդմոն Մելիքսեթի - «ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՁԱԽՈՂԵԼՈՒ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԲՈԼՈՐ ՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» 77

Ոսկանյան Վիգեն Ռաֆիկի - «ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԱՄԵՆՕՐՅԱ ԲԱՐԵԽԻՂՃ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՐՏԻՐՈՍՎԱԾ ՏՂԱՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ» 80

Սահակյան Արամայիս Արսենի - «ԴԻՐՔԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԹԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՏԵՂ ՉՈՒՆԵՆ» .. 83

Սարգսյան Ռուստամ Տիգրանի - «ՉՊԵՏՔ Է ՄՈՌԱՆԱՆՔ ԴԱՌՆ ԱՆՑՅԱԼԸ, ՈՐՊԵՍԶԻ ՍՏԻՊՎԱԾ ՉԼԻՆԵՆՔ ԱՅՆ ՆՈՐԻՑ ՎԵՐԱՊՐԵԼ» 86

Սերոբյան Հայկ Արամի-«ՄԵՆՔ ՕՐ ՈՒ ԳԻՇԵՐ ԱՆՍԱՍԱՆ ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԻՆ» 89

Սիմոնյան Արմեն Սարգսի - «ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԵԼՈՒ ԵՆՔ ԱՎԱԳՆԵՐԻ ԹՈՂԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ, ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՋՈՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ» 92

Սիմոնյան Դավիթ Լևոնի - ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ 95

Ստեփանյան Վարդան Սամվելի - «ԵԹԵ ԳՏՆՎՈՒՄ ԵՍ ԴԻՐՔՈՒՄ, ՈՒՐԵՄՆ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՍ» 98

Վարդանյան Նարեկ Նորիկի - «ԲԱՆԱԿՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ ԿՅԱՆՔԻ ՓՈՐՁԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՄԵԿ ԱՅԼ ՏԵՂ» 101

Փիրոև Գարիկ Ծերունի - «ԻՆՉՊԵՍ ՄԵՐ ՕՋԱԽԸ ԿՊԱՇՏՊԱՆԵՆՔ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԴԻՐՔԸ ՊԱՀԵԼ ՈՒ ՊԱՇՏՊԱՆԵԼ» 104

ՀԱՎԵԼՎԱԾ 107

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր հայրենիքի պաշտպանության դիրքերում կանգնած յուրաքանչյուր սպա և զինվոր, հիրավի, հերոս է՝ ժողովրդի ծոցից ելած ու նրան պատմության քառուղիներով համարձակորեն ուղեկցող մի անվախ քաջազուն, ով հստակ գիտակցում է իր անելիքը և հայրենիքի վեհությունը չափում պարտքի խորը գիտակցումով, ազնիվ նվիրվածությամբ, ծով համբերությամբ:

Նրանց մասին հնարավոր չէ խոսել առանց պատկառանքի և հպարտության, առանց այն համոզմունքի, որ գործ ունես անձնվիրաբար ամենօրյա Հաղթանակներ կերտող, համեստ ու կորովի դյուցազունների հետ:

Այո, մեր երկրի յուրաքանչյուր օրը՝ մի ինքնատիպ Հաղթանակ է, որը կերտվում է մեր Հայրենիքի պետական սահմանների երկայնքով կանգնած դիրքապահ սպայից, սերժանտից, զինվորից սկսած, ծովանում դաշտում հողի հետ կռիվ տվող շինականի, հաստոցի դիմաց կանգնած բանվորի, սերունդներ կրթող մանկավարժի, ղեկավար պաշտոնյայի և երկիր պահող ազատամարտիկի հայրենանվեր գործերում, հասնում մինչև մեր առյուծածին մայրերին և դառնում նրանցից յուրաքանչյուրի հպարտության ու ոգևորության անսպառ աղբյուրը:

Այսպես է գրվում Հաղթանակող երկրի պատմությունը, որտեղ գլխավոր հերոսը եղել է, կա և կմնա Հայրենիքի նվիրյալ զինվորականը:

Ողջունելի է մեր հայրենիքի պաշտպանության դիրքերում կանգնած բոլոր տղաների նվիրական առաքելությունը արժևորելուն կոչված «Պաշտպանության բանակի լավագույն դիրքապահները» աշխատանքը, այն պահանջված է ու արդիական և ցանկալի կլինի, որ ունենա շարունակական բնույթ:

Նորայր Մկրտչյան՝
ՊԲ ԱՀՏԱ բաժնի պետ, գնդապետ
14 սեպտեմբերի 2017թ.

Պատմությունը հայ ժողովրդի նկատմամբ անողոք է եղել՝ նրան շրջապատելով մտավոր և մշակութային զարգացման ավելի ցածր մակարդակ ունեցող, ագրեսիվ ցեղերով ու ցեղախմբերով: Այսպիսի իրավիճակը մեր ժողովրդից պահանջել է մշտապես հոգալ ինքնապաշտպանության հետ կապված օրավուր հարցերը, ինչպես ասում են՝ չոր պահել վառոդը և, դրա հետ մեկտեղ, անընդհատ ասպատակությունների ենթարկվելով՝ վերաշինել Հայրենիքը: Հասկանալի է, թե ինչ ահռելի ջանքեր են անհրաժեշտ՝ մի կողմից երկիրը պաշտպանելու, մյուս կողմից՝ մշակույթ ու գիր զարգացնելու համար: 21-րդ դարում գրեթե ոչինչ չի փոխվել: Լավատես ու լուսասեր հայը, նրա երիտասարդ սերունդը, ինչպես նախկինում, այժմ էլ ստիված է իր եռանդն ու կորովը ներդնել մի կողմից երկրի սահմանների հուսալի պաշտպանության, մյուս կողմից՝ գիտությունն ու մշակույթը զարգացնելու գործում:

Այս առումով ուշագրավ աշխատանք է կատարել Հրայր Փաշայանը՝ իր գրքի միակ հերոսը դարձնելով Արցախի Պաշտպանության բանակի դիրքապահ զինվորին: 18-20 տարեկան այն պատանուն, ով իր վրա կրեց 2016թ. ապրիլին նենգ հակառակորդի նախահարձակ գործողությունները և առաջխաղացումը կանխելու ողջ պատասխանատվությունը: Ահա թե ինչու բոլոր էսսեները, որոնք նվիրված են դիրքում իր ծառայողական պարտականություններն անմռունչ կատարող հայ զինվորին, մի կողմից իրար նման են, մյուս կողմից՝ խիստ տարբեր: Բոլոր դեպքերում այդ փոքրիկ պատմություններն ընթերցվում են հետաքրքրությամբ, հուզմունքով ու հպարտությամբ:

Կարծում եմ, որ հեղինակը շնորհակալ գործ է կատարել՝ պատմության հիշողությանը հանձնելով այն տղաների կատարած սխրանքը, ովքեր ամեն օր, ամեն վայրկյան աչալուրջ հսկում են մեր Հայրենիքի սահմանները: Համոզված եմ, որ նա առաջիկայում ևս ընթերցողի դատին հանձնելու բազում հնարավորություններ կունենա, քանի որ ընտրել է հայ զինվորի փառքն ու պատիվը բարձր պահելու ճշմարիտ առաքելությունը:

Վիկտյա Յարամիշյան՝
ԱրՊՀ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ
23 սեպտեմբերի 2017թ.

Միշտ համոզված եմ եղել, որ մեր երկրի պետական սահմանի այն հատվածը, որտեղ հայ զինվորն իրականացնում է մարտական հերթապահություն, ոչ այնքան պետության վարչական տարածքի աշխարհագրական պարագիծն է, որքան բաժանարար գիծ է բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի, այսինքն պատմության երկու իրարամերժ վարկածների, կյանքի և մահվան միջև: Այս ամենը հաշվի առնելով կարելի է վստահաբար պնդել, որ մեր երկրում դիրքապահ զինվորը կատարում է ամենից կարևոր առաքելությունը: Ցանկացած եղանակային պայմաններում, օրվա ցանկացած ժամի նա զենքը ձեռքին պաշտպանում է մեր ժողովրդի գոյություն ունենալու իրավունքը, ոչնչացումից պահպանում է մշակույթը, որը մեր նյութական և հոգևոր հիշողությունն է, ապահովում է հետագայում լինելու և զարգանալու հնարավորությունը:

Դիրքապահ զինվորը հերոս է, ով մեր անցյալի ժառանգության պահապանն է, և ում կոշտացած ձեռքերում է գտնվում մեր ապագայի բանալին:

Հրայր Փաշայանի գիրքը ընթերցողին է ներկայացնում Պաշտպանության բանակի լավագույն դիրքապահներին: Անկասկած, ժողովուրդը պետք է ճանաչի իր հերոսներին: Կարծում եմ, որ նրա հեղինակած գրքի նշանակության մասին երկար խոսելն ավելորդ է, որովհետև այն պատմում է մեր երկրի ամենից կարևոր մարդու՝ դիրքապահ զինվորի մասին:

Սուրեն Սարումյան՝
գրող, արձակագիր

ՄՈՒՏՔ

Հայ ժողովրդի համար Հայրենիքի պաշտպանությունն իր կազմավորումից ի վեր առանձնահատուկ կարևորություն և նշանակություն է ունեցել: Գտնվելով բարդ աշխարհագրական և շատ հաճախ նաև աշխարհաքաղաքական իրադարձությունների կիզակետում, մենք բոլոր ժամանակներում ստիպված ենք եղել կյանքի գնով պաշտպանել հող հայրենին:

Այսօր՝ 21-րդ դարի արշալույսին, ծովից ծով Հայաստանից մնացած մի փոքր հատվածի անվտանգությունն ապահովելու գործընթացում իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեն մեր 18-20 տարեկան դիրքապահները, ովքեր հայոց արևելյան սահմաններն ավագների օրինակով պաշտպանում են անձնուրացաբար: Նրանց ամենօրյա, նվիրված ու հայրենանվեր առաքելությունն, անկասկած, միայն ու միայն դրվատանքի է արժանի: Ուժերի գերլարման և անօրինակ սխրագործությունների ու քաջության, իսկ երբեմն էլ՝ կյանքի գնով է մեր տղաներին հաջողվում շատ հաճախ մարտական գործողություններից ոչնչով չտարբերվող պայմաններում կատարել հայրենիքի պաշտպանի ամենօրյա նվիրական առաքելությունը:

Շեշտենք, որ սահմանափակ քանակով զինծառայողների մասին հոդվածների ներկայացումը ամենևին չի նշանակում, որ դիրքապահի պարտականությունները լավագույնս կատարող այլ ծառայողներ չկան: Ընդհակառակը, մենք բոլորս բազմիցս ենք լսում նրանց կողմից կատարված ամենատարբեր սխրագործությունների մասին, և հենց նրանց բոլորի հավաքական ջանքերով է ապահովվում մեր երկրի անվտանգությունը:

Քանի դեռ աշխարհում միայն ուժեղի հետ են հաշվի նստում, քանի դեռ շրջապատված ենք թշնամաբար տրամադրված երկրներով, քանի դեռ ուժն է ծնում իրավունքը, մենք պետք է ամեն ինչ անենք ուժեղ բանակ, ասել է թե՝ պաշտպանված հայրենիք ունենալու համար:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐԸ

Ասատրյան Խորեն Իշխանի.

«ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀԻՎ Է ՀՆԱՐԱՎՈՐ ԴԱՌՆՈՒՄ ԱՆԱՌԻԿ ՊԱՀԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԸ»

Պաշտպանության բանակի բազմաթիվ դիրքապահներից մեկն էլ, ով իրեն լավագույն կողմերով է դրսևորել մարտական հերթապահության կրման ընթացքում, Խորեն Իշխանի Ասատրյանն է: Ծնվել է 1997 թվականի դեկտեմբեր 28-ին Ապարանի շրջանի Հարթավան գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը և առաջին կուրսից զորակոչվել զինծառայության:

Դիրքապահի պարտականությունները կատարելու ընթացքում շարքային Խ. Ասատրյանը, նախևառաջ, կարևորում է յուրաքանչյուրի սեփական պարտականությունների հստակ իմացությունը: Դրանց ճիշտ կատարմամբ է նա պայմանավորում ընդհանուրի հաջողությունը: *«Դիրքում գտնվող տղաներից յուրաքանչյուրն իր կոնկրետ մասնագիտությունն ունի: Չէ որ ամեն մի զինատեսակ նախատեսված է որոշակի նպատակի, իսկ ընդհանուրի համատեղումը՝ առաջադրված մարտական խնդիրների հստակ կատարման համար: Այսինքն՝ բոլորի և յուրաքանչյուրի*

պատրաստվածության շնորհիվ է հնարավոր անառիկ պահել դիրքերը», - նշում է շարքային Խ. Ասատրյանը:

Հակառակորդի դիրքերը մեր դիրքերից՝ սահմանի այս հատվածում բավականին հեռու են: Տղաների կարծիքով, փոքր տրամաչափի զինատեսակներով կրակելն իմաստ չունի՝ նպատակին հասնել հնարավոր չէ: Այդուհանդերձ, դա ամենևին չի նշանակում, թե դիրքապահների զգոնությունը դրանից թուլանում է, մանավանդ, որ հեռահար զինատեսակների օգտագործումը վերջին շրջանում գնալով ակտիվանում է: Իսկ տեղանքի առանձնահատկությունը, մասնավորապես՝ թանձրախիտ անտառները՝ նվազագույնի հասցնելով զինված և անզեն աչքով հակառակորդին նախապես հայտնաբերելու հնարավորությունը, ստիպում են դիրքապահներին լինել ավելի զգոն, որպեսզի կարողանան ականջալուր լինեն անտառից եկող ձայներին՝ անհրաժեշտության դեպքում ժամանակին, ճիշտ և անվրեպ գործելու համար: Իսկ, որ հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի ժամանակին հայտնաբերումից է կախված իրենց հաջողությունն ու անհաջողությունը, կասկածից վեր է՝ ապացուցվել է բազմիցս:

Նրա համոզմամբ՝ «*Նման բարդ բնակլիմայական պայմաններում մարտական հերթապահություն իրականացնող անձնակազմը պարզապես պարտադրված է առավելագույնս զգոնություն ցուցաբերել, ինչպես նաև ֆիզիկապես ամուր լինել, որպեսզի կարողանա ցանկացած եղանակի դեպքում կատարել առաջադրված խնդիրները: Առանց զգոնության ու ֆիզիկական կոփվածության, այստեղ ծառայություն կատարելն ուղղակի անհնարին է: Դա գիտակցում են նաև զինծառայողները՝ ամենօրյա պարապմունքների ընթացքում ձգտելով կոփել իրենց մարմինը*»:

Այցելության ընթացքում ականատես ենք դառնում նաև այն պարապմունքներին, որոնք զինծառայողներին հնարավորություն են տալիս կանխելու հակառակորդի դիվերսիոն-հետախուզական

ներթափանցման փորձերը: Համապատասխան ազդանշանից հետո, դիրքապահ տղաները նախատեսված գրաֆիկի համաձայն, կարճ ժամանակում անցնում են շրջանաձև պաշտպանության՝ տեղեկացնելով իրենց պատրաստության մասին:

Անձնակազմի՝ տրված հրահանգներն ու առաջադրված խնդիրները ճիշտ, ժամանակին և վստահաբար կատարումը ևս խոսում է նրանց բարձր մարտունակության մասին:

«Մենք՝ դիրքապահներս, կարևորում ենք վերադաս հրամանատարության կողմից տրված ցուցումները, հրահանգներն ու խորհուրդները՝ մեզ առաջադրված խնդիրները կատարելիս: Իսկ տեսական ու գործնական պարապմունքները, որոնք կողքից ավելորդ ու հոգնեցնող են թվում, նպաստում են զինծառայողների մոտ բարոյակամային բարձր որակների ձևավորմանն ու իրենց պարտականությունների հստակորեն կատարմանը: Ճիշտ է, հակառակորդը տարբեր գործողություններով փորձում է լարվածություն առաջացնել, ազդել մեր մարտական ոգու վրա, սակայն շնորհիվ մեր ոգու քաջության ու հստակ գործողությունների, խափանել և խափանելու ենք նրանց մտադրությունները», - հպարտորեն ասաց շարքային Խորեն Ասատրյանը:

Ավոյան Ռոբերտ Երվանդի.

«ՀԵՐՈՍ ՏՂԱՆԵՐԻ ԱՐՅԱՄԲ ՍՐԲԱԳԾՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀՈՒՍԱԼԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ ԵՆ»

Մեր զրուցակիցը դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Ռոբերտ Երվանդի Ավոյանն է: Ծնվել է 1997 թվականի օգոստոսի 7-ին Երևան քաղաքում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո երեք տարի սովորել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հենակետային վարժարանում, որն ավարտելուց հետո ընդունվել է նույն համալսարանի տնտեսագիտական բաժինը և առաջին կիսամյակի ավարտից հետո՝ 2016 թվականի հունվարին, զորակոչվել ծառայության:

Մեր այն հարցին թե ինչի շնորհիվ է արժանացել հրամանատարության ու ծառայակից ընկերների վստահությանը, և ապա ստանձնել դիրքի ավագի պատասխանատու պարտականությունները, պատասխանում է. *«Իմ կարծիքով ծառայությանը շատ շուտ եմ հարմարվել, կարծես թե ի սկզբանե հոգեբանորեն պատրաստ եմ եղել զինվորական ծառայության բոլոր դժվարություններին: Ունենալով անհրաժեշտ կազմակերպչական և մարդկանց հետ շփվելու ունակություններ, շատ ու շատ զինվորների հետ եմ սկսել ընկերություն անել: Այս ամենը դրական ազդեցություն է ունեցել զինվորական կոլեկտիվի կայացման վրա և բնականաբար չի վրիպել հրամանատարության ուշադրությունից: Անցնելով համապատասխան կրտսեր հրամանատարական դասընթացներ՝ արժանացել եմ կրտսեր սերժանտի զինվորական կոչման, այնուհետև*

նշանակվել դիրքի ավագ»: Այսինքն՝ առաջադրված խնդիրները հաջողությամբ իրականացնելու նախապայմաններից մեկը, դիրքի ավագը համարում է ընկերական վերաբերմունքն ու կոլեկտիվի միասնականությունը:

Խոսելով դիրքերում մարտական հերթապահության իրականացման, սահմաններն անառիկ պահելու և սեփական պարտականությունների կատարման մասին, դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Ռ. Ավոյանն ասաց հետևյալը. *«Հրամանատարության կողմից ինձ վստահված կրտսեր հրամանատարի՝ դիրքի ավագի պաշտոնը երբեք չեմ չարաշահել, չեմ փորձել այն օգտագործել իմ հանգստի ու կարիքների բավարարման համար: Հակառակը, մշտապես և բոլոր հարցերում անձնակազմի հետ եմ եղել, ընկերական խորհուրդներով ու դիտողություններով միշտ զգաստության կոչել նրանց: Կարևորելով զինծառայողների մասնագիտական պատրաստվածությունը հակառակորդի հավանական գործողությունների դեպքում՝ պարբերաբար պարապմունքներ եմ իրականացնում, փորձում բացատրել, թե յուրաքանչյուրը հակառակորդի դիվերսիոն-հետախուզական ներթափանցման, հանկարծակի հարձակման, հրետակոծության կամ այլ գործողությունների դեպքում ինչ պետք է անի: Այս և այլ հարցերի շուրջ պարբերաբար խորհրդակցում ենք, կիսվում կարծիքներով, հենց տեղանքում ճշտում անելիքները և փորձում գտնել առաջադրված խնդիրների լուծման առավել արդյունավետ ճանապարհը»*:

Զինծառայության ընթացքում Ռոբերտն ավելի է համոզվել, որ յուրաքանչյուր մարդ իր տեղն ու դերն ունի այս կյանքում: Նա, դիրքապահի պարտականությունը ստանձնելուց հետո սկսել է ավելի արժևորել հայրենիքի դերը: Ինչ վերաբերում է կոնկրետ սեփական հաջողություններին, ապա կրտսեր սերժանտ Ռ. Ավոյանի կարծիքով, պարզապես կատարում է այն ինչ պարտավոր է:

«Մենք զորակոչվել ենք բանակ Հայրենիքին երկու տարի ծառայելու համար: Այսօր հպարտորեն կարող եմ ասել, որ ստանձնելով դիրքապահի պարտականությունները՝ մեր երկրի սահմանի որոշակի հատվածն եմ պաշտպանում: Այստեղ ամեն ինչ սահմանված է պարզ ու հստակ: Եթե հետևենք սահմանված կարգուկանոնին, հրամանատարների ցուցումներին, և պարզապես պատասխանատվությամբ կատարենք մեր պարտականությունները, հաջողությունն ապահովված է», - մեզ հետ զրույցում շեշտում է կրտսեր սերժանտ Ռոբերտ Ավոյանը:

Թե՛ զորամասում, թե՛ դիրքերում տեսնելով մերօրյա հերոսների նվիրված, պատասխանատու և անձնազոհ ծառայությունը, մենք հերթական անգամ համոզվում ենք, որ նվիրյալ տղաների արյամբ գծված հայրենիքի սահմանները հուսալի ձեռքերում են:

Բլբուլյան Սարմեն Արշալույսի.

«ՄԵՐ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՄԲ ԱՄՈՒՐ ԲՌՈՒՆՑՔ ԴԱՐՁԱԾ՝ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՐՎԱԾԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԵՎ ՁԱԽՈՂԵԼ ՆՐԱ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Կեսօրն արդեն մոտ էր, երբ հասանք գնդապետ Կարեն Գրիգորյանի հրամանատարության տակ գտնվող զորամասի մարտական դիրքերից մեկը: Թվում էր, տիրող լռությունը հավիտենական է և ոչինչ չի կարող խաթարել այն: Սակայն դիմացը թշնամին է՝ նենգ ու դավադիր, ցանկացած պահի պատրաստ ցույց տալու իր իսկական դեմքը:

Շարքային Սարմեն Արշալույսի Բլբուլյանին հանդիպեցինք կացարանին հարակից հատվածում՝ առույգ հերթափոխի պարտականություններն էր կատարում՝ աչալրջորեն դիտարկելով շրջակայքը:

Ծնվել է 1998 թվականի փետրվարի 27-ին Իջևան քաղաքում: Զորակոչվել է ծառայության 2016 թվականի հուլիսին և շուրջ 14 ամիս է ինչ ծառայում է Պաշտպանության բանակում, որից մի մասը՝ դիրքերում: Դիրքապահի պարտականությունները կատարելը նրա համար առօրեական է արդեն: Դա հնարավոր է դարձել սեփական կամքի և հրամանատար-ենթակա քրտնաջան աշխատանքի արդյունքում: Հայրենիքի սահմաններն անառիկ պահելու հարցում Սարմենը կարևորում է զգոնությունը և մասնագիտական բարձր պատրաստվածությունը, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր

ժամանակին նկատել հակառակորդի կողմից իրականացվող քայլերը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

«Հակառակորդն այստեղից մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա է գտնվում և մենք գիտակցելով այս հանգամանքը, ձգտում ենք ամենայն լրջությամբ կատարել մեր պարտականությունները: Դիրքապահներիս համար այս ամենն արդեն սովորական է դարձել, առօրեական: Մեր գերխնդիրը հենց այս ամենին կամ զինվորական լեզվով ասած «մարտական իրադրությանը տիրապետելն է», որն իր մեջ բազմաթիվ բաղադրիչներ է ներառում:

Հրամանատարության անմիջական աջակցությամբ և մեր նախաձեռնությամբ վերջին շրջանում դիրքերում զգալի ինժեներական կահավորման աշխատանքներ են կատարվել, որոնք շարունակական բնույթ են կրում: Դրանք կատարված են խնամքով և այնպես, որ մարտ վարելու համար առավելագույնս անվտանգ և հարմարավետ լինի, որ ավելի լավ պայմաններում կատարենք մեր ծառայողական պարտականությունները: Իսկ նորագույն սարքավորումներով հագեցվածությունը թույլ է տալիս ավելի բարձր մակարդակով կատարել առաջադրված խնդիրները՝ լիովին վերահսկողության տակ պահելով հակառակորդի գործողությունները», - մեզ հետ զրույցում ասաց շարքային Ս. Բլբուլյանը:

Իսկ ինչ վերաբերում է դիրքապահի պարտականությունների կատարմանը, ապա ինքն անձամբ համոզված է, որ առաջին գծում, թշնամուն դեմ դիմաց հնարավոր չէ կանգնել առանց հայրենասիրության, միասնության ու մարտական բարձր ոգու: *«Հայրենասիրությունն ու զինծառայությունը միմյանց հետ փոխկապակցված են, և դրանց համակցության շնորհիվ ենք մենք պահպանում մեր լեզուն, ինքնությունը, հայրենիքը: Այսօր, առավել քան երբևէ, հանուն մեր ազատության ու անկախության*

հրամանատար ու զինվոր պարտավոր ենք բռունցքվել, որպեսզի մեր նախորդներին կարողանանք փոխանցել հզոր, ազատ ու անկախ հայրենիք:

Մարտական հերթապահություն կատարելու ընթացքում կարևոր է նաև զինծառայողների բարոյահոգեբանական վիճակը: Եթե բարոյահոգեբանական տեսակետից մարդը խոցելի է լինում, դա բացասական է անդրադառնում զգոնությանը և նա, ընդհանրապես, խոցելի է դառնում թշնամու համար: Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում կարևոր նշանակություն ունի բոլորիս միասնականությունը, միմյանց նկատմամբ հոգատար ու պատրաստակամ վերաբերմունքը, - մեզ հետ զրույցում իր համոզմունքներն է արտահայտում շարքային Ս. Բլբուլյանը՝ շեշտելով, - մեր միասնությամբ, ամուր բռունցք դարձած պատրաստ ենք հարվածել հակառակորդին և ձախողել նրա մտադրությունները»:

Զինծառայությանն առնչվող ամենատարբեր թեմաների շուրջ զրուցելով հայրենիքի երիտասարդ պաշտպանի հետ՝ ավելի էր ամրապնդվում մխիթարությունն առ այն, որ մեր նվիրյալների կրած տառապանքները, կորուստներն ու զրկանքները զուր չեն անցել, քանի որ նրանց գործի շարունակողները վստահորեն են կանգնած Հայրենիքի պաշտպանության դիրքերում:

Դիլանյան Ցոլակ Դերենիկի.

«ԴԻՐՔԸ ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՆՆ Է»

Ավելի քան մեկուկես տարի է, ինչ Ցոլակը ծառայում է Պաշտպանության բանակում, կատարում դիրքապահի պարտականությունները և այդ ընթացքում հասցրել է բավականին փորձառություն ձեռք բերել:

Ցոլակ Դերենիկի Դիլանյանը ծնվել է 1997 թվականի հուլիսի 16-ին Արարատի մարզի Արևշատ գյուղում: Դեռ աշակերտ էր, երբ ընտանյոք տեղափոխվեցին Ռուսաստանի Դաշնություն: Սակայն, Ցոլակը ոմանց պես այն առիթ չի դարձրել ծառայությունից խուսափելու համար, չնայած դրա հնարավորությունն ուներ: *«Առաջին հերթին Հայրենիքում ծառայելու նպատակով եմ վերադարձել: Չնայած մարտահրավերներին՝ մեր երկիրը միշտ էլ նախընտրելի է բոլորից»,* - համոզված է կրտսեր սերժանտ Դիլանյանը:

«Զինծառայությունը մարտական դիրքերում ընթանում է սահմանված կարգով: Իմ անձնակազմի մարտական ոգին ամուր է և պետք է շեշտեմ, որ օրեցօր ավելի ենք կոփվում, վստահություն ձեռք բերում սեփական ուժերի նկատմամբ՝ ցանկացած պահի պատրաստ գտնվելով հակառակորդին հակահարված տալու: Կարևորելով դիրքերի ինժեներական կահավորվածությունը՝ ամեն հերթափոխի ժամանակ փոնում ենք ինչ-որ բան ավելացնել, կահավորել դիրքերը, որպեսզի անձնակազմի համար մարտական հերթապահության իրականացումն ավելի անվտանգ դառնա, իսկ մարտ վարելու

ընթացքում՝ ավելի հարմար», - ասում է կրտսեր սերժանտ Ց. Դիլանյանը՝ վստահեցնելով, որ այսուհետ ևս պատրաստ են պատասխանատվությամբ կատարելու իրենց պարտականությունները:

Իմ այն հարցին՝ թե ինչպե՞ս է հաջողվում հաղթահարել զինծառայության և դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում ծագած բազում խնդիրները՝ Ց. Դիլանյանը պատասխանում է. *«Առաջին հերթին պետք է ասեմ, որ ոչ միայն բանակում, այլ նաև քաղաքացիական կյանքում կան բազմաթիվ խնդիրներ: Իմ կարծիքով դրանք կոփում են մարդու կամքը, նրան դարձնում ավելի փորձառու: Ինչ վերաբերում է դրանց հաղթահարմանը, ապա դա հնարավոր է դառնում բոլորիս՝ հրամանատարի ու զինվորի միասնական ու միակամ ջանքերի արդյունքում»:*

Կրտսեր հրամանատարը սեփական տեսակետն ու հիմնավորումն ունի նաև զորամասի մշտական տեղակայման վայրում և դիրքերում ծառայելու վերաբերյալ: Կարծում է, որ դիրքում ծառայելն իր և ընկերների համար ավելի նախընտրելի, ավելի հոգեհարազատ է, քան զորամասում:

«Պատվաբեր լինելուց բացի, կա ևս մի հանգամանք, որն, այսպես ասած, նախընտրում են տղաները: Բանն այն է, որ այստեղ ավելի բարձր է մեր ինքնուրույնության մակարդակը՝ սկսած ճաշ եփելուց, որը մենք տեղում ենք պատրաստում, մինչև անգամ անհրաժեշտության դեպքում թշնամու նկատմամբ իրականացվող գործողությունները: Բացի դրանից, հենց այստեղ ես իսկական զինվորական դառնում, - նշում է կրտսեր սերժանտ Ց. Դիլանյանն՝ ավելացնելով, - դիրքում ծառայելու յուրահատկություններից ու դրական կողմերից մեկն էլ այն է, որ այստեղ շատ ջերմ են զինծառայողների փոխհարաբերությունները՝ այնպես, ինչպես ընտանիքում: Իսկ դիրքը պարզապես մեր երկրորդ օջախն է դարձել,

որտեղ ընկերական հարաբերություններով հանդերձ յուրաքանչյուրն ունի հստակ անելիքներ»:

Այն հարցին, թե արդյոք դժվար չէ այդպիսի ջերմ փոխհարաբերությունների պայմաններում կատարել դիրքի ավագի պարտականությունները՝ պատասխանում է. *«Իրոք, պետք է խոստովանել, որ հրամանատարի պարտականությունները կատարելն այնքան էլ հեշտ գործ չէ: Բայց կարողանում եմ ամենայն պատասխանատվությամբ իրականացնել այն, որին օգնում է նաև հստակ կանոնակարգով ղեկավարվելը: Մյուս կողմից՝ ինչպես ընկերական միջավայրում, այնպես էլ դիրքի ավագի պարտականությունները կատարելիս, հանդես եմ գալիս որպես ավագ ընկեր, որը թույլ է տալիս առանց լուրջ խոչընդոտների կազմակերպել մարտական հերթապահությունը: Կա մի հանգամանք ևս. դա բոլորի մոտ տիրապետող այն գաղափարի հստակ գիտակցումն է, որ մեր առաքելությունը մեր հայրենիքի պաշտպանությունն է, սահմանի այն հատվածի պաշտպանությունը, որը վստահված է մեզ»*, - ասում է կրտսեր սերժանտ Դիլանյանը՝ կոչ անելով բոլոր զինծառայողներին պատվով կատարել հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը:

Եգորյան Ատոմ Հարությունի.

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԺԵՔՆԵՐ ԵՆ ԵՎ ՁԵՌՔ ԵՆ ԲԵՐՎՈՒՄ ԱՐՅԱՆ ԳՆՈՎ

«Նախքան ժամկետային ծառայության անցնելը՝ ես ցանկանում էի զինվորական դառնալ: Հավանաբար դրանում իր դերն է ունեցել այն հանգամանքը, որ շատ եմ լսել ազատամարտիկների սխրագործությունների մասին: Հայրս և հորեղբայրներս մասնակցել են պատերազմական գործողություններին, հորեղբայրներիցս մեկն իր կյանքն անվերադարձ նվիրաբերել է հայրենիքին: Այս ամենը, բնականաբար, իրենց հետքն են թողել իմ ներաշխարհում: Սկզբում որոշել էի սովորել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում, սակայն հանգամանքների բերումով չստացվեց», - շարքային Ատոմ Եգորյանն է իր մտքերը կիսում մեզ հետ՝ շեշտելով, որ ծառայությունը իսկական տղամարդու գործ է:

Ատոմ Հարությունի Եգորյանը ծնվել է 1998 թվականի դեկտեմբերի 30-ին Քաշաթաղի շրջանի Գանձա համայնքում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բեռների ու տրանսպորտների տեղափոխում և կազմակերպում բաժինը: Առաջին կուրսի առաջին կիսամյակն ավարտելուց հետո զորակոչվել է ծառայության: Արցախյան ազատամարտի օրերին հայրը նույնպես մասնակցել է հայրենիքի այս հատվածի ազատագրմանը, որի ժամանակ էլ որոշել և այնուհետև որոշումն ի

կատար է ածել, տուն տեղ կառուցելով՝ մշտական բնակություն հաստատել Գանձայում:

Ինչպես սահմանում կանգնածներից շատերը՝ Ատոմը նույնպես դիրքապահի պարտականությունները կատարելիս առաջին հերթին կարևորեց զգոնությունն ու անվտանգության կանոնների պահպանումը: Եվ դա պայմանավորում է այն հանգամանքով, որ ուխտադրուժ հակառակորդն է իրենց դիմացը կանգնած, հետևաբար ցանկացած պահի պետք է պատրաստ լինել թշնամու արկածախնդրությանը դիմակայելուն ու արժանի հակահարված տալուն: Նա հայրենիքի պաշտպանի առաքելության մեջ ավելի խորն իմաստ է տեսնում և ասում. *«Մեր դիրքերը, խրամատը, հենակետը ոչ միայն պարզապես տեղամասեր են, որտեղից իրականացվում է հայրենիքի պաշտպանությունը, այլև հանուն մեր երկրի ազատության իրենց կյանքը նվիրաբերած քաջերի արյամբ գծված սահմաններ են: Ասել է թե, իրենք կրկնակի առաքելություն են կատարում, հերոս նախնիների սրբազան գործն են շարունակում, նրանց անունն ու պատիվն են պահում»:*

Անքուն գիշերներ անցկացնելով դիրքերում, սակայն չթերագնահատելով յուրաքանչյուր զինծառայողի տեղն ու դերը բանակի հզորացման և երկրի պաշտպանության կազմակերպման գործում, շարքային Ա. Եգորյանը հասկացել է, որ իսկական ծառայությունը հենց մարտական դիրքում, մարտական հերթապահության իրականացումն է:

«Գտնվելով և՛ խաղաղության, և՛ պատերազմի իրավիճակում՝ պետք է ցանկացած պահի պատրաստ լինենք հակառակորդի հնարավոր գործողություններին դիմակայելուն: Իսկ դիրքերում պատերազմականին հնարավորինս մոտ պայմաններում գտնվելը զինծառայողներին ուսուցանում է անհրաժեշտ բարոյակամային հատկանիշներ, խրամատից կրակ վարելու հմտություն, տեղանքում կողմնորոշվելու և վերջապես մեր հայրենիքի մի հատվածի հետ

ծանոթանալու իրական հնարավորություն», - նշում է շարքային Եգորյանը՝ չթաքցնելով, որ դիրքերում ծառայելուց հետո՝ զորամասի մշտական տեղակայման վայրում ծառայությունը շատ ավելի հեշտ է թվում, իսկ ժամանակը՝ աննկատ: *Դիրքերում ծառայած և այդ հայրենանվեր առաքելությունը ստանձնած երիտասարդը, կարող եմ վստահաբար ասել, հետագա կյանքում ծագած բոլոր դժվարությունները կկարողանա հեշտությամբ հաղթահարել»:*

Խոսելով դիրքապահների ծառայության մասին՝ Ատոմը կարծում է, որ այն ամենավեհ առաքելությունն է, որը մարդ կարող է կատարել հայրենիքի համար՝ պաշտպանելով ու պահպանելով իր երկրի սահմաններն ու նրա շարունակական զարգացումը: Զինծառայությունն իր հերթին պայմաններ է ստեղծում անհատի զարգացման համար՝ նպաստելով նրա ֆիզիկական կոփվածությանը, նոր գիտելիքների ու հմտությունների ձեռքբերմանը, բարդ իրավիճակներում ինքնուրույն գործելու ունակությունների կատարելագործմանը: *«Ինչպես ժողովրդական իմաստությունն է ասում՝ «Արդարությունը քաջի սրի ծայրին է»: Այս մտածելակերպն է այսօր կառավարում աշխարհը, որտեղ թույլերը տեղ չունեն: Ես զինծառայության եմ անցել այս գաղափարներով տոգորված, այս զգացողությունն ու ընկալումները իմ ծառայակից ընկերներին փոխանցելու հաստատակամությամբ, որպեսզի նրանք նոր ոգևորությամբ ծառայեն և իրենց համեստ ավանդը ներդնեն հայրենիքի պաշտպանության սուրբ գործին»*,- նշում է շարքային Ա. Եգորյանը՝ նկատելով, որ դրա համար պետք է հստակ գիտակցել՝ *ազատությունն ու անկախությունը բացարձակ արժեքներ են և ձեռք են բերվում արյան գնով:*

Թառոյան Արմեն Հարությունի.

«ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԱՐԺԱՆԻ ՀԱԿԱՀԱՐՎԱԾ ՀԱՍՑՆԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ»

Պաշտպանության բանակի գնդապետ Կ.Ջալավյանի հրամանատարությամբ գործող զորամասի մարտական դիրքերից մեկում, մեր այցելության պահին, դիրքապահի պարտականությունները կատարում էր շարքային Արմեն Թառոյանը: Արմեն Հարությունի Թառոյանը ծնվել է 1997 թվականի հունիսի 3-ին Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում: Դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է պարտադիր ժամկետային զինծառայության և առայսօր ծառայում է նույն զորամասում:

Ստորաբաժանման հրամանատարի ԱՀՏԱ գծով տեղակալ, մայոր Արմեն Բարխուդարյանի բնորոշմամբ, զինծառայության առաջին օրերից շարքային Թառոյանը դրական կողմերով է աչքի ընկել, հանդես բերելով կարգապահություն, գիտելիքները խորացնելու պատրաստակամություն և օրինակելի վարք: Այս ամենը նրան ավելի շատ են օգնում դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում, երբ բոլոր միջոցներն ու հնարավորություններն օգտագործելով պետք է կատարել առաջադրված մարտական խնդիրը:

Հանգստի համար նախատեսված ժամանակահատվածն օգտագործելով՝ զինծառայության և հայրենքի պաշտպանությանն առնչվող հարցերի շուրջ նրա հետ զրուցեցինք հենց դիրքի կացարանում:

«Զինծառայության ընթացքում հաջողության հասնելու հիմնական գրավականն, իմ կարծիքով, նվիրվածությունն է քեզ վստահված գործին, պատասխանատվության զգացումն ու սերն առ Հայրենիք: Երբ հասկանում և գիտակցում ես քո գործի կարևորությունը, ինքնըստինքյան պարտավորված ես զգում բարեխղճորեն կատարել պարտականություններդ: Մենք այնպիսի երկրի հարևանությամբ ենք ապրում, որ մշտապես պետք է պատրաստ լինենք նրա սպառնալիքներին դիմակայելու համար», - նկատեց շարքային Արմեն Թառոյանը:

Բավական ժամանակ է, ինչ Արմենը մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների կազմում անմիջականորեն ներգրավված է հայրենիքի պաշտպանությանը և այս ընթացքում անհրաժեշտ փորձ ու գիտելիքներ է ձեռք բերել, որոնք յուրաքանչյուր զինծառայողի համար օդ ու ջրի պես պետք են դիրքապահի պարտականությունները կատարելիս: Եվ ոչ միայն:

«Դիրքապահի պարտականությունների կատարման նախապայմանը զգոնությունն է, որը խստագույնս պետք է պահպանել թե՛ ցերեկային, թե՛ գիշերային հերթապահության ժամերին: Պետք է գիտակցել, թե ինչի համար ենք այստեղ գտնվում և թե ինչ կարող է լինել, եթե մեր պարտականությունները կատարենք թերի: Երկրորդ կարևոր հանգամանքն անվտանգության կանոնների պահպանումն է, մանավանդ՝ հակառակորդի կողմից իրականացվող դիպուկահարային պատերազմի պայմաններում: Եվ, իհարկե, միմյանց նկատմամբ հարգալից ու ընկերական վերաբերմունքը, որը ցանկացած դժվարություն հաղթահարելու համար կարևոր դեր է կատարում:

Առանձնահատուկ ուզում եմ շեշտել, որ զինծառայության ընթացքում ձեռք բերած զինվորական գիտելիքներն ու փորձը մեզ անհրաժեշտ են ո՛չ միայն երկու տարվա համար, այլև՝ ողջ կյանքի: Դրա մասին են վկայում անցած տարվա ապրիլյան

իրադարձությունները, երբ հակառակորդի դեմն առնելու համար ոտքի կանգնեց ողջ ժողովուրդը: Այսինքն՝ երկու տարվա զինծառայությունը մեզ՝ երիտասարդներիս համար ոչ միայն լավագույն հնարավորություն է հայրենիքի հանդեպ մեր սուրբ պարտքը կատարելու, այլև ռազմական գործին հավուր պատշաճի տիրապետելու համար, որովհետև տարածաշրջանային աշխարհաքաղաքականությունը և անհանգիստ հարևանների առկայությունը հային հաճախակի է պարտադրում զենք վերցնելու», - իրավացիորեն նկատեց շարքային Թառոյանը՝ շեշտելով, որ կուտակած փորձն ու պատրաստակամությունն օգտագործելով, դիրքապահներով պատրաստ են հակառակորդին արժանի հակահարված հասցնել:

Իսայան Նարեկ Նոյելի.

«ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԶՍՊԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ԿԱՐԳԻ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻ ՈՒԺՆ Է»

Նարեկ Նոյելի Իսայանը ծնվել է 1997 թվականի հոկտեմբերի 28-ին, Վանաձոր քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զբաղվել է մեքենաների նորոգման աշխատանքով: Զինծառայության է զորակոչվել 2016 թվականի հունվարին:

Լավ դիրքապահ լինելու համար շարքային Ն. Իսայանը կարևորեց հրամանատրության կողմից տրված հրահանգների ճիշտ ու ժամանակին կատարումը: *«Ունենալով ավելի մեծ փորձ և գիտելիքներ զինծառայության ամենատարբեր հարցերի վերաբերյալ՝ մեր հրամանատարներն ամեն ինչ անում են որպեսզի մեզ համար ավելի հեշտ դառնա ծառայողական պարտականությունների կատարումը: Իսկ մենք՝ դիրքապահներս, գիտակցաբար ենք կատարում նրանց կողմից տրված հրահանգներն ու ցուցումները: Չէ՞ որ նրանց կողմից իրականացվող մասնագիտական պարապմունքները, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված քայլերը և ընդհանրապես բոլոր հորդորներն ու ցուցումները, որոնք առաջին հայացքից բարդ ու դժվարին են թվում, ուղղված են մեր անվտանգության ապահովմանն ու առաջադրված խնդիրների կատարմանը: Անհրաժեշտության դեպքում նրանք կանգնում են մեր կողքին, նույնիսկ կատարում ամենավտանգավոր առաջադրանքները, ինչը պարտավորեցնում է մեզ ավելի լուրջ վերաբերվել սեփական ծառայողական*

պարտականությունների կատարմանը», - անկեղծորեն նկատեց շարքային Ն. Իսայանը:

Դիրքապահի պարտականությունների հստակ կատարման համար շարքային Նարեկ Իսայանն իր ծառայողական փորձից ելնելով կարևորեց անձնակազմի միասնականությունն ու բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի առկայությունը: Դրանք հատկապես անհրաժեշտ են դժվարությունները հաղթահարելու համար: *«Առաջին անգամ դիրքերում գտնվող զինվորի համար դժվար է հատկապես հերթապահությունը գիշերվա ժամերին: Բայց ընկերներն օգնում են այս հարցում, ու արդեն մի քանի հերթափոխից հետո այլևս հարմարված ես լինում պայմաններին»:*

Իսկ ընկերները էական չէ, թե ով որ քաղաքից կամ գյուղից է: *«Կարևորն իրար հասկանալն է: Առանց կոլեկտիվի, զինվորների ու սպաների միասնականության ու բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի առկայության՝ հնարավոր չէ մարտական խնդիր կատարել և անառիկ պահել հայրենիքի սահմանները: Մենք միասնական ենք և գործում ենք «մեկը բոլորի ու բոլորը մեկի համար» սկզբունքով: Հարցը վերաբերում է ոչ միայն մարտական հաշվարկի համաձայն յուրաքանչյուրին առաջադրված խնդիրների կատարմանը, որն ինքնին կարևոր է, այլև՝ ընկերական հարաբերությունների առկայությանը: Միայն այս դեպքում յուրաքանչյուր զինծառայող կկարողանա հստակորեն կատարել իրեն առաջադրված խնդիրները՝ վստահ լինելով, որ թիկունքում կանգնած են ծառայակից ընկերները՝ ցանկացած պահի օգնելու պատրաստակամությամբ»:*

Խոսելով դիրքերում տարվող մարտական հերթապահության մասին՝ Նարեկը կարևորեց դիտարկումների անընդհատ կատարումը, անվտանգության կանոնների, զգոնության ու կարգապահության պահպանումը: *«Մենք հակառակորդից բավականին մոտ տարածության վրա ենք գտնվում և յուրաքանչյուր*

բացթողում, անզգուշություն կամ անփութություն ճակատագրական դեր կունենա դիրքապահներիս, սահմանի որոշակի հատվածի և ընդհանրապես մեր երկրի անվտանգության ապահովման համար: Դրա համար պետք է զգոն լինել, անընդհատ դիտարկումներ կատարել, տիրապետել սահմանում տիրող իրավիճակին, հակառակորդի շարժին ու անգամ մտադրություններին: Ինչպես տարիների փորձն է ցույց տալիս, հակառակորդին զսպելու և նրան կարգի հրավիրելու հիմնական միջոցը հայ զինվորի ուժն է: Այդ իսկ պատճառով պետք է ուժեղ լինել, լավ տիրապետել կցագրված զենքին, այն միշտ խնամել, պահել մաքուր ու պատրաստ վիճակում, որպեսզի նա էլ որպես հավատարիմ ընկեր երբեք քեզ չդավաճանի: Մենք դիրքապահներով այս ամենը գիտակցում ենք, հետևաբար բոլորի անունից կարող եմ վստահեցնել, որ ցանկացած պահի պատրաստ ենք պատվով կատարել հայրենիքի պաշտպանի մեր առաքելությունը»:

Խաչատրյան Սամվել Հարությունի

«ԵՐԲԵՔ ՀՈՒՍԱԽԱԲ ՉԱՆԵԼՈՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ... »

Ծառայության անցնելով Պաշտպանության բանակում՝ շատ հաճախ երիտասարդ հայրենյաց պաշտպանները չգիտեն թե ինչ դժվարություններ ու փորձություններ պիտի հաղթահարեն: Սակայն հանուն Մեծ գաղափարների՝ նրանք պատրաստակամորեն են ստանձնում պատվաբեր առաքելությունը: Սամվել Հարությունի Խաչատրյանը նրանցից մեկն է: Ծնվել է 1997թ. հունվարի 11-ին Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում: Զորակոչվել է զինծառայության 2015 թվականին: Զինծառայության տարբեր ոլորտներում ցուցաբերած բանիմացության, ընկերասիրության և գիտելիքները խորացնելու պատրաստակամության շնորհիվ Սամվել Խաչատրյանը զորամասում ծառայելու առաջին օրերից ձեռք է բերել վերադաս հրամանատարության և ծառայակից ընկերների վստահությունն ու հարգանքը: Մասնակցելով սերժանտական դասընթացներին՝ ստացել է կրտսեր սերժանտի, այնուհետև սերժանտի զինվորական կոչում՝ նշանակվելով ջոկի հրամանատար:

Տեսական գիտելիքները գործնականում կիրառելու իսկական հնարավորություն Սամվել Խաչատրյանին և նրա անձնակազմին ընձեռվեց 2017 թվականի փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերը: Եվ իր պարտականությունները նա կատարեց գերազանց:

Տեղեկանալով հակառակորդի դիվերսիոն-հետախուզական ներթափանցման մտադրության մասին և ճիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը՝ դիրքի ավագ, սերժանտ Սամվել

Խաչատրյանն անձնակազմին թաքստոցներում պատսպարվելու հրաման տվեց, իսկ ինքը՝ մարտական դիրքի ձախ հատվածում գնդացրորդ, շարքային Վահրամ Մարտիրոսյանի հետ միասին նպաստավոր կրակային դիրքեր զբաղեցրեցին և զենքի վրա տեղադրված ջերմատեսիլ սարքի օգնությամբ դեպի հակառակորդն ուղղորդեց կրակը:

«Գիշերը ժամը 2:30-ի սահմաններում հարևան դիրքից մեզ զանգել և զգուշացրել են, որ մեր ուղղությամբ հակառակորդի շարժ են նկատել: Գործելով նման իրավիճակներում նախատեսված պլանի համաձայն՝ զբաղեցրել ենք համապատասխան կրակային դիրքեր: Վերադաս հրամանատարության հետ անընդհատ կապ պահելով՝ սպասել ենք հարմար պահի և այն հասունանալուն պես՝ սկսել կրակել:

Անհարկի պատահարներից խուսափելու համար անձնակազմի հիմնական մասին հրահանգել եմ խստիվ պահպանել անվտանգության կանոնները, առանց հրամանի դուրս չգալ խրամաբջիջներից, իսկ ես՝ գնդացրորդ, շարքային Վահրամ Մարտիրոսյանի հետ դիրքավորվել խրամուղու այն հատվածում, որտեղից ավելի նպաստավոր էր կրակ վարելը»,- մեզ հետ զրույցում ասաց դիրքի ավագ, սերժանտ Սամվել Խաչատրյանը:

Խոսելով դիրքերում տարվող մարտական հերթապահության մասին, դիրքի ավագը կարևորեց զինծառայողների մարտական պատրաստվածությունն ու զգոնությունը, որոնք պատշաճ մակարդակով կատարելու դեպքում՝ բոլոր դիրքապահներն էլ կարող են պատվով ու բարձր մակարդակով կատարել իրենց առաջադրված մարտական խնդիրները: *«Նախքան մարտական հերթապահության ստանձնումը, զորամասի մշտական տեղակայման վայրում բազմաթիվ պարապմունքներ են իրականացվում, որոնք ուղղված են զինծառայողների մասնագիտական պատրաստվածությանը, որպեսզի յուրաքանչյուրը հստակորեն իմանա իր կոնկրետ*

անելիքները, փիրապետի կցագրված զենքին ու զինամթերքին: Չէ՞ որ դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում այդ զենքն է լինելու իր ընկերն ու պաշտպանը: Նշված նպատակով հենց դիրքերում ենք տարաբնույթ միջոցառումներ կազմակերպում, պարբերաբար զենքի խնամք իրականացնում, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանանք այն ըստ նպատակի օգտագործել: Միաժամանակ, մարտական հերթապահություն տանելիս պետք է չափազանց զգոն լինել, ժամանակին կատարել դիտարկումները, որպեսզի կարողանանք պատվով կատարել հայրենիքի պաշտպանի վեհ առաքելությունը: Իմ կարծիքով դիրքապահ տղաները բոլորն էլ քաջ գիտակցում են, թե ինչ պատասխանատու առաքելություն է դրված իրենց վրա և որքան կարևոր է, որ երբեք հուսախաբ չանեն սպասելիքները»,- նշեց դիրքի ավագ, սերժանտ Սամվել Խաչատրյանը՝ հավելելով, որ տեղի ունեցած գործողությունները եկան փաստելու, որ տղաներն իրոք գիտակցաբար և բարձր մակարդակով են կատարում իրենց պարտականությունները:

Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցման փորձը կասեցնելիս ցուցաբերած անձնական արիության ու խիզախության համար Սամվել Հարությունի Խաչատրյանը ԼՂՀ նախագահի կողմից պարգևատրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Արիության համար» մեդալով:

Խաչունց Գառնիկ Արմենի.

«ԴԻՐՔԵՐՈՒՄ ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻ ՄՇՏԱՐԹՈՒՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՆԱՌԻԿ ԵՆ, ԻՍԿ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ»

ՊԲ գնդապետ Կարեն Ջալավյանի հրամանատարությամբ գործող զորամասի մարտական դիրքերից մեկում, զինծառայությանն առնչվող տարաբնույթ հարցերի շուրջ զրուցեցինք իրեն լավագույն կողմերով դրսևորած զինծառայող, դիրքի ավագ, ավագ սերժանտ Գառնիկ Խաչունցի հետ:

Ավագ սերժանտ Գառնիկ Արմենի Խաչունցը ծնվել է 1997 թվականի հունիսի 7-ին Սյունիքի մարզում՝ Գորիսի շրջան ի Տեղ գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, որից հետո զորակոչվել զինծառայության:

Շուտով կլրանա Պաշտպանության բանակի շարքերում ծառայելու ավագ սերժանտ Գառնիկ Խաչունցի երկու տարին: Ի պաշտոնե լինելով մեր երկրի սահմանի որոշակի հատվածի պահպանության ու պաշտպանության պատասխանատուն՝ նա լավագույնս է գիտակցում դրա կարևորությունն ու անհրաժեշտությունը մեր երկրի անվտանգության ապահովման գործում:

«Մեր զինծառայողները գիտակցաբար են կատարում իրենց պարտականությունները: Բոլորս հասկանում ենք, որ պետք է հստակորեն տիրապետենք մեր մասնագիտությանը, մարտական

հաշվարկով նախատեսված գործողություններին, որպեսզի թշնամու ներթափանցման փորձի դեպքում կարողանանք արժանի հակահարված տալ: Բացի դրանից, կարևոր է անվտանգության կանոնների պահպանումը, մանավանդ՝ սահմանային լարվածության և հակառակորդի կողմից տարբեր զինատեսակներից կրակի վարման պայմաններում: Այս նպատակով անձնակազմը համապատասխան հրահանգավորումներ է ստացել դիտարկվող վայրեր դուրս չգալու, խրամաբջիջներում ճիշտ դիրքավորվելու, դիտորդի պարտականությունները կատարելու և ինժեներական աշխատանքներ իրականացնելու ընթացքում», - մեզ հետ զրույցում ասաց դիրքի ավագը՝ հավելելով, որ հակառակորդի կողմից ձեռնարկվող քայլերը պարտադրում են ավելի պատասխանատվությամբ կատարել առաջադրված խնդիրները:

Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում ավագ սերժանտ Գ. Խաչունցը կարևորում է զինծառայողների միջև առկա ընկերական վերաբերմունքը, միմյանց օգնելու պատրաստակամությունն ու կամեցողությունը: *«Դիրքապահ տղաները գիտակցում են, որ առանց իրար օգնելու հնարավոր չէ կատարել սեփական, թերևս բոլորի համար ամենանվիրական ու ամենադժվարին առաքելությունը: Մարտական հերթապահության կրումը կոլեկտիվ աշխատանք է և պահանջում է յուրաքանչյուր զինծառայողի ունակությունների ու հնարավորությունների գերլարում, բոլոր հարցերում միմյանց հետ խորհրդակցելու անհրաժեշտություն: Ես անձամբ պարբերաբար զրուցում եմ բոլոր զինծառայողների հետ՝ թե՛ առանձին-առանձին, թե՛ կոլեկտիվ կազմով, լսում նրանց կողմից բարձրացվող հարցերը, առաջարկությունները և ընտրում խնդրի լուծման ամենաարդյունավետ ճանապարհը»*, - ասաց ավագ սերժանտ Գառնիկ Խաչունցը:

Որպես կրտսեր հրամանատար, բացի վերոնշյալ հանգամանքներից, դիրքի ավագն իր պարտակությունները լիարժեքորեն կատարելու համար կարևորում է նաև օրվա կարգացուցակով նախատեսված միջոցառումների ժամանակին կատարումը: Ինքն անձամբ դիրքապահների առօրյան այնպես է կազմակերպում, որպեսզի պահպանվի հավասարության սկզբունքը, որպեսզի որևէ մեկն իրեն ճնշված չզգա և յուրաքանչյուրը հնարավորություն ունենա սահմանված կարգով հանգստանալու:

«Նման պատասխանատու առաքելությունը հնարավոր է կատարել միայն առույգ և բարձր տրամադրվածություն ունենալով՝ գիտակցելով, որ յուրաքանչյուրը ցանկացած պահի, ցանկացած հարցում պատրաստակամ է քեզ օգնելու», - մեզ հետ զրույցում շեշտում է դիրքի ավագը՝ վստահեցնելով, որ եթե հայ զինվորը մշտարթուն կանգնած է դիրքում, երկրի սահմաններն անառիկ կմնան, հայրենիքը՝ պաշտպանված:

Խլղաթյան Տիգրան Հենզելի.

«ԴԻՐՔԵՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻՍ ՀԱՄԱՏԵՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՍԻՔՆ Է»

Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում աչքի ընկած զինծառայողներից մեկն էլ, ում հետ զրուցեցինք զինծառայությանն առնչվող տարբեր թեմաների և մասնավորապես մարտական հերթապահության շուրջ, շարքային Տիգրան Խլղաթյանն է: Ինչպես մյուս դիրքապահները, ինքը նույնպես համեստություն ցուցաբերելով հայտնեց, որ պարզապես կատարում է իր ծառայողական պարտականությունները: *«Եվ ընդհանրապես, դիրքերում ունեցած հաջողությունն ու անհաջողությունը, ձեռքբերումներն ու ձախողումները ես համարում եմ յուրաքանչյուրիս և բոլորիս համատեղ ծառայության արգասիքը»:*

Տիգրան Հենզելի Խլղաթյանը ծնվել է 1998 թվականի հունվարի 29-ին Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, դրան զուգահեռ զբաղվելով սպորտով, մասնավորապես՝ ֆուտբոլով: Զորակոչվել է զինծառայության 2016 թվականի հուլիսին:

Դիրքապահի պարտականությունների հաջող կատարման համար Տիգրանը կարևորում է բոլոր հանգամանքները՝ սկսած կցագրված զենքի խնամքից, նրան հստակորեն տիրապետելուց,

անվտանգության կանոնների պահպանումից մինչև ծառայակիցների միջև ընկերական, առողջ մթնոլորտի առկայությունը:

«Գրեթե 6 ամիս է, ինչ ընդգրկված եմ մարտական հերթապահությունում և այս ընթացքում կարողացել եմ ավելի արժևորել դիրքապահի պարտականությունների կատարումը: Առանց քո գործի կարևորությունը գիտակցելու, առանց հայրենիքը սիրելու հնարավոր չէ նման պատասխանատու և նվիրական առաքելություն կատարել:

Ավագ ընկերների և դիրքապահի պարտականությունների կատարման անձնական փորձից համոզվել ու ծառայակից ընկերներիս էլ մշտապես հորդորում եմ լինել զգոն, պահպանել անվտանգության կանոնները: Նույնիսկ, եթե ամենուրեք լռություն է, ապա չպետք է դրանից առիթավորվել, թուլացնել զգոնությունը և, ընդհանրապես, խախտել անվտանգության կանոնները», - մեզ հետ զրույցում շեշտում է շարքային Տ. Խլղաթյանը:

Դիրքապահի պարտականությունների հաջող կատարման գրավականներից մեկն էլ շարքային Տ. Խլղաթյանը կապում է անձնակազմի միջև տիրող ընկերական մթնոլորտի հետ: *«Չնայած դիրքերում ծառայելու ոչ մեծ ժամանակահատվածին, ես դիրքապահի պարտականությունները կատարել եմ տարբեր անձնակազմերի հետ:*

Մշտական տեղակայման վայրում գտնվելով՝ երբեմն այդ անձնակազմերի հետ շփվելու հնարավորություն կամ անհրաժեշտություն չի լինում, կամ այդ շփումները շատ մակերեսային բնույթ են կրում: Դիրքերում փոխվում է իրավիճակը: Այստեղ միմյանց հետ հարաբերությունները դառնում են ընկերական և դրանք հետագայում զարգացնելու հիմքեր են ստեղծվում:

Դիրքերում համատեղ ծառայությունը, միմյանց հետ հաց կիսելը և իրար օգնելու պատրաստակամությունը այլ արժեք ու բովանդակություն ունեն», - մեզ հետ զրույցում ասաց շարքային Տ.

Խլղաթյանը՝ հավելելով, որ իր այցելած բոլոր դիրքերում միշտ համերաշխ մթնոլորտ է տեսել:

Ըստ Տիգրանի՝ զինծառայության ընթացքում ծագած դժվարությունները առօրեական են, հիմնականում կապված նոր պայմաններին հարմարվելու հետ, որը նրա համոզմամբ, բնական է: Բայց դժվարությունները հաղթահարելը տղամարդուն է բնորոշ, և երիտասարդ զինծառայողները, հաղթահարելով դժվարությունները ավելի են ամրանում, առնականանում, կյանքի փորձություններին ավելի պատրաստ ու դիմացկուն դառնում:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից մեր հայրենիքի հասցեին հնչեցվող մշտական սպառնալիքները և ընդհանրապես, արդի տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական զարգացումները ավելի են կարևորում այն դերը, որը հայ զինվորն է անընդհատ՝ օր ու գիշեր, եղանակային ցանկացած պայմաններում կատարում՝ ապահովելով մեր երկրի ու բնակչության անվտանգությունը:

Շարքային Տիգրան Խլղաթյանը մեզ հետ զրույցի վերջում վստահեցրեց, որ բոլոր դիրքապահներն ունեն անհրաժեշտ կամք և մասնագիտական ունակություններ թշնամու ոտնձգություններից հայրենիքի սահմանները պաշտպանելու համար:

Կարապետյան Կարապետ Առաքելի.

ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՎ ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ Ի ՑՈՒՅՑ ԴՆԵԼՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կարապետ Առաքելի Կարապետյանը ծնվել է 1997 թվականի օգոստոսի 29-ին Երևան քաղաքում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է հայ-հունական պետական քոլեջում որպես գինեգործ-տեխնոլոգ: Զորակոչվել է ժամկետային զինծառայության 2016 թվականին: Նա 2017թ. փետրվարին հակառակորդի նախաձեռնած դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցման փորձը կասեցնողներից մեկն է:

«Հակառակորդիդի դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցումը կանխելու և նրանց ոչնչացնելու ընթացքում մեզ անգնահատելի օգտակար եղան գիշերային տեսանելիության սարքերը: Բացի հակառակորդին հայտնաբերելուց և գործողությունները վերահսկելուց, այդ սարքերի միջոցով մենք կարողացել ենք ուղիղ նշանառության տակ առնել դիվերսանտներին և ոչնչացնել նրանց:

Հետևելով հրամանատարի ցուցումներին՝ ես և դիպուկահարը զբաղեցրել ենք կրակային դիրքեր և հրամանը ստանալուն պես սկսել ենք կրակել: Դիվերսանտներից մի քանիսին ոչնչացնելուց հետո, երբ մեր դիրքերի ուղղությամբ հակառակորդը սկսեց կրակ վարել՝ անվտանգության նկատառումներից ելնելով հրամանատարի ցուցումով ես փոխեցի կրակային դիրքս: Այնուհետև սկսեցի օգնել դիպուկահարին՝ կողմնորոշելով նրան դիպուկ նշանակետ: Մեր

աչալրջության շնորհիվ ձախողվեցին նաև դիակները տանելուն ուղղված նրանց հետագա փորձերը», - փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերը տեղի ունեցած դեպքերի մասին իր հիշողություններով կիսվեց գնդացրորդ, շարքային Կարապետ Կարապետյանը՝ հավելելով, որ հավանաբար իրեն էր վիճակված արժանանալու այդպիսի պատվի՝ գործնականում կիրառելով տեսական գիտելիքներն ու ի ցույց դնելով հայրենիքին նվիրվածությունը, թեև ըստ նրա, բոլոր զինծառայողներն էլ նման կերպ կվարվեին:

Այդ օրը, ինչպես հայտնի է, հակառակորդը ձախողվելով սեփական արկածախնդրության մեջ և մարտի դաշտում թողնելով հատուկ պատրաստություն անցած սեփական ասկյարների դիերը, նահանջել է: Շնորհիվ մեր տղաների աչալրջության, հակառակորդը ձախողվել է նաև գիշերվա ընթացքում մի քանի անգամ դիակները տանելու փորձում:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչի շնորհիվ հաջողվեց բարձր մակարդակով կատարել իրենց առջև ծառացած մարտական խնդիրը, ապա դիրքապահի կարծիքով, նախևառաջ զգոնության ու մասնագիտական պատրաստվածության: *«Ներկայումս առաջնագծում առկա տեխնիկական միջոցները թույլ են տալիս հուսալի և անընդհատ դիտարկում իրականացնել, ժամանակին հայտնաբերել հակառակորդի խմբավորումները և քայլեր ձեռնարկել դրանց չեզոքացման ուղղությամբ»*, - ասում է գնդացրորդ, շարքային Կարապետ Կարապետյանը՝ շեշտելով, որ այս գործողություններից իրենց մարտական ոգին ավելի է բարձրացել, ավելի փորձառու են դարձել, ավելի վստահ սեփական ուժերի նկատմամբ և ցանկացած պահի պատրաստ են ավելի մեծ կորուստներ պատճառելով հակառակորդին, կասեցնել ամեն մի նոր ոտնձգություն՝ անառիկ պահելով հայրենիքի սահմանները:

«Այստեղ մենք ոչ միայն մեր անձի համար ենք պատասխանատու, այլև բոլոր նրանց, ովքեր վստահելով մեզ,

արարում են խաղաղ պայմաններում: Ինչ վերաբերում է մարտական հերթապահության հավուր պատշաճի իրականացմանը, ասել է թե՝ հայրենիքի սահմաններն անառիկ պահելուն, ապա կարծում եմ, որ մեզ առաջադրված խնդիրները կատարելու համար, բացի զուտ պարտականությունները կատարելուց, կարևոր են նաև կոլեկտիվի միջև առկա միջանձնային հարաբերությունները: Առանց համերաշխ ու կուռ կոլեկտիվի ոչ միայն մենք, այլև մյուս դիրքապահները չեն կարող կատարել իրենց առաջադրված խնդիրները», - նշում է նա՝ վստահեցնելով, որ իրենք պատրաստ են խափանելու հակառակորդի ցանկացած ոտնձգություն:

Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցման փորձը կասեցնելիս ցուցաբերած անձնական արիության ու խիզախության համար Կարապետ Առաքելի Կարապետյանը ԼՂՀ նախագահի կողմից պարգևատրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Արիության համար» մեդալով:

Հակոբյան Հայկ Ռաֆիկի.

«ԴԻՐՔԵՐՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՓՈՎ ՓՈՐՁՈՒՄ Է ՕԳՆԵԼ ՄՅՈՒՍԻՆ՝ ՆՊԱՍՏԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ»

Դիրքապահի պարտականությունները լավագույնս կատարող զինծառայողներից մեկին՝ շարքային Հայկ Հակոբյանին առաջին անգամ հանդիպեցինք առույգ հերթափոխի պարտականությունները կատարելիս: Քանի որ մարտական հերթապահության ժամանակ անձնակազմին արգելվում է զբաղվել այնպիսի գործողություններով, որոնք կապված չեն մարտական հերթապահության կատարման պարտականությունների հետ, նրա հետ զրուցեցինք հանգստի համար տրված ժամանակահատվածում:

Հայկ Ռաֆիկի Հակոբյանը ծնվել է 1997 թվականի դեկտեմբերի 26-ին, Երևան քաղաքում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո տեղի ուսումնարաններից մեկում ուսանել է խոհարարի մասնագիտություն: Զորակոչվել է զինծառայության 2016 թվականին: Ինչպես ավելի ուշ պետք է իր համար Հայկը պարզեր, զինծառայության հետ ոչ մի առնչություն չունեցող մասնագիտություններն էլ են երբեմն օգտակար լինում առաջադրված խնդիրների կատարմանը:

Հայտնի է, որ դիրքերում զինծառայողները հնարավորություն ունեն ինքնուրույն՝ իրենց ճաշակով ու հայեցողությամբ պատրաստել տրված ուտելիքը՝ իհարկե չխախտելով սահմանված կարգը: Ճիշտ է, մեր այցելած բոլոր դիրքերում տղաները նման խնդիր չունեին, սակայն այն հանգամանքը, որ իրենց մեջ հմուտ կերակուրներ

պատրաստող մասնագետ կա, լուծված է համարվում դիրքապահների համար ևս մեկ կենցաղային կարևորության խնդիր: Մեր այն հարցին՝ թե արդյո՞ք իր մասնագիտությունն օգնում է դիրքերում մարտական հերթապահության հավուր պատշաճի կազմակերպմանը՝ պատասխանում է. *«Այո, աշխատանքի բաժանումը միշտ էլ դրականորեն է անդրադառնում մարտական հերթապահության վրա և ես ուրախությամբ եմ զինվորների համար կերակուր պատրաստում, նրանց ցույց տալիս խոհարարական գաղտնիքները: Դիրքերում յուրաքանչյուրն իր ունակությունների չափով փորձում է օգնել մյուսին, նպաստել ընդհանուր գործի կատարմանը»:*

Շուրջ 1,5 տարի է, ինչ Հայկը ծառայում է Պաշտպանության բանակի գնդապետ Ս. Շաքարյանի հրամանատարությամբ գործող զորամասում և այս ընթացքում կարողացել է ոչ միայն հմտանալ դիրքապահի սրբազան պարտականությունների կատարման գործում, այլև ձեռք է բերել իսկական տղամարդուն բնորոշ հատկություններ, որոնք յուրաքանչյուր մարդու պետք են ողջ կյանքի ընթացքում: Դա հնարավոր է դարձել հետևողական աշխատանքի և ամուր կամքի ցուցաբերման արդյունքում: *«Անմիջական հրամանատարությունը մշտապես և բոլոր հարցերում պատրաստակամ է զինծառայողներին օգնելու: Մեզ՝ զինծառայողներիս համար, դա անչափ կարևոր նշանակություն ունեցող հանգամանք է, ոչ միայն մասնագիտական բարձր պատրաստվածություն և ծառայողական ունակություններ ձեռք բերելու համար, որն ինքնին կարևոր է, այլև բարոյակամային և բարոյահոգեբանական ամուր ոգի ձևավորելու համար: Միայն այս երկու որակների համատեղությամբ կարող է զինծառայողը կատարել իրեն առաջադրված բոլոր խնդիրները, - նշում է շարքային Հայկ Հակոբյանը՝ հավելելով, - մեր հրամանատարներն անձնական օրինակով ու ցուցաբերած վերաբերմունքով կարողանում են*

լավագույն հատկանիշներ ձևավորել զինծառայողների մեջ, ինչը յուրաքանչյուրի և ընդհանուրի հաջողության գրավականն է»:

Առույգ հերթափոխի պարտականությունների կատարման ընթացքում շարքային Հայկ Հակոբյանը կարևորում է կացարանի և հարակից տարածքի անընդհատ դիտարկումը, կողմնորոշիչների, հակառակորդի հավանական գործողությունների ուղղության, նրանց զորքերի դասավորվածության, և այլ կարևոր տվյալների իմացությունը: *«Դա առաջին հերթին անհրաժեշտ է հարկ եղած դեպքում պաշտպանության կազմակերպման համար, որը նպատակ ունի կասեցնել հակառակորդի հարձակումը, առավելագույն կորուստ պատճառել նրան, պահել տեղանքը և պայմաններ ստեղծել վճռական հարձակման անցնելու համար»:*

Ինչ վերաբերում է հայրենիքի սահմաններն անառիկ պահելուն, որի համար տղաներն օր ու գիշեր կանգնած են դիրքերում, ապա այս հարցում նա կարևորում է զգոնությունն ու անվտանգության կանոնների պահպանումը, քանի որ միայն բոլոր համալիր գործողությունների արդյունքում կարող են ժամանակին նկատել հակառակորդի կողմից իրականացվող քայլերը, ի պատասխան՝ օգտագործելով մասնագիտական պատրաստվածությունը կազմակերպել շրջանաձև պաշտպանություն և հասնել ցանկալի արդյունքի: Իսկ, որ հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում այս ամենը կարևոր նշանակություն ունեն՝ կասկածից վեր է:

Ղազարյան Աշոտ Եղիազարի.

«ՄԵՆՔ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՎՈՐՆԵՐ ԵՆՔ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾ ԵՆՔ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ԱՅԴ ԿՈՉՈՒՄԸ»

Օրն արդեն կիսվել էր, երբ դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում իրենց լավագույն կողմերով դրսևորած զինծառայողների հետ զրուցելու նպատակով հասանք Պաշտպանության բանակի գնդապետ Հրայր Թևոսյանի հրամանատարությամբ գործող զորամասի մարտական դիրքերից մեկը:

Չնայած կիզիչ արևին՝ զինծառայողները սահմանված կարգացուցակի և իրենց առաջադրված խնդիրներին համապատասխան մարտական հերթապահություն էին իրականացնում մեր երկրի արևելյան հատվածում:

Դիրքապահի պարտականությունների կատարման, հայրենասիրության և ծառայությանն առնչվող թեմաների շուրջ զրուցեցինք աչքի ընկած զինծառայողներից մեկի՝ շարքային Աշոտ Եղիազարի Ղազարյանի հետ:

Ծնվել է 1997 թվականի հուլիսի 28-ին Արարատի մարզի Այնթափ համայնքում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի միս և մսամթերք բաժինը, իսկ առաջին կուրսի առաջին կիսամյակն ավարտելուց հետո՝ 2016 թվականին զորակոչվել ծառայության:

Նախքան զորակոչվելը Աշոտը որոշ տղաների նման նույնպես թյուր պատկերացում ուներ ծառայության մասին: Սակայն այժմ չափազանց ուրախ է, առավել ևս հպարտ, որ ծառայում է

Պաշտպանության բանակում, կատարում դիրքապահի պարտականությունները: *«Ծառայության ընթացքում հասկացել եմ, թե գործնականում ինչ է հայրենասիրությունը և որն է ծառայության իմաստը, որովհետև բանակը բավականին փոխում, կրթում ու վերադաստիարակում է բոլորիս: Հասկացել եմ, որ հայ մարդը պետք է ծառայի հայրենիքին, պաշտպանի իր օջախը, որպեսզի ավելի արժևորի Հայրենիքը, նրա հերոսական անցյալն ու հավատով լցվի դեպի ապագան: Ես հասկացել եմ այդ ամենը և դրա համար շատ ուրախ եմ: Ու նաև հպարտ եմ, որ ծառայում եմ Պաշտպանության բանակում: Մենք հաղթանակած բանակի զինվորներ ենք և պարտավորված ենք բարձր պահել այդ կոչումը»*, - մեզ հետ զրույցում ասաց շարքային Ա. Ղազարյանը:

Աշոտն այն զինծառայողների թվին է պատկանում, ով գիտակցաբար է կատարում իր պարտականությունները, և անընդունելի է համարում ոմանց ծառայությունից խուսափելու պատրվակները: *«Դա ընդամենը եսասիրություն է, թուլակամություն ու վախկոտություն: Չէ որ ծառայելով հայրենիքիդ՝ դրանով նպաստում ես նաև ընտանիքիդ անվտանգության ապահովմանը, չէ որ, բացի նյութականից, կան նաև այլ կարևոր արժեքներ, և ես պատրաստ եմ ցանկացած պահի պաշտպանել արժեքների արժեքը՝ իմ Հայրենիքը»:*

Նա երախտապարտությամբ խոսեց իր հրամանատարների մասին, որոնք ամեն ինչ անում են ծագած դժվարությունները հաղթահարելու, մասնագիտությանը տիրապետելու և առաջացած խնդիրները լուծելու համար: *«Բացի նրանից, որ տարիները հնարավորություն են տալիս փորձ կուտակել, մեր հրամանատարները բավականին ժամանակ համբերությամբ են տարել զինծառայողների կամակորությունները և նպատակադիր ու համառ ջանքերի շնորհիվ կարողացել են մեզ դարձնել այնպիսին, ինչպիսին որ կանք՝ ավելի գիտակից, պատրաստված ու ոգեպես*

ավելի ամրապնդված», - մեզ հետ զրույցում անկեղծանում է շարքային Ա. Ղազարյանը:

Ծառայության ընթացքում շարքային Ա.Ղազարյանի վերաբերմունքը Հայրենիքի և հայրենասիրության նկատմամբ բավականին փոխվել է, ամրապնդվել այն համոզմունքը, որ յուրաքանչյուրն իր գործունեությամբ պետք է նպաստի հայրենիքի հզորացմանը: *«Զինծառայությունից հետո ևս փորձելու եմ իմ գործունեությամբ օգնել հայրենիքիս, ծգտելու եմ դառնալ հայրենիքիս պիտանի զավակ, դրանով իսկ նպաստելով իմ, ընտանիքիս ու հայրենիքիս կայացմանն ու հզորացմանը», - ասում է նա:*

Մեր հեռանալու պահին շարքային Ա.Ղազարյանը որպես բարեմաղթանք նշեց, որ կցանկանար, որպեսզի բոլոր հայերն առանց երկմտելու ծառայեն հայոց բանակում, որովհետև յուրաքանչյուրի գործելաոճից ու պահվածքից, բոլորիս համատեղ ջանքերից է կախված մեր Հայրենիքի վաղվա ճակատագիրն ու հզորությունը: *«Իսկ բոլոր ծնողներին կոչ կանեի զինվել համբերությամբ, շատ չանհանգստանալ, այլ հպարտանալ, որ իրենց զավակները հայոց հաղթանակած բանակի զինվորներ են և գնացել են պաշտպանելու ավագների փայփայած ու արյամբ գծված հայրենիքի սահմանները»*, - իր խոսքը եզրափակեց շարքային Ա. Ղազարյանը:

Մազմանյան Աշոտ Արթուրի.

«ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ԵՎ ՆՎԻՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է»

Ծառայության անցնելով Պաշտպանության բանակի գնդապետ Գեղամ Գաբրիելյանի հրամանատարությամբ գործող զորամասում, շարքային Աշոտ Մազմանյանը գիտակցաբար ձգտել է հաղթահարել նոր միջավայրի ստեղծած բոլոր դժվարությունները: Կարճ ժամանակում հարմարվելով զինծառայությանը՝ Աշոտն ամենայն պատասխանատվությամբ է կատարել վերադաս հրամանատարության կողմից տրված ցուցումները՝ ցանկացած առաջադրանք կատարելով նվիրումով ու բարեխղճությամբ:

Աշոտ Արթուրի Մազմանյանը ծնվել է 1997 թվականի սեպտեմբերի 21-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: 8-րդ դասարանն ավարտելուց հետո երեք տարի հայրենի քաղաքի պետական պոլիտեխնիկական քոլեջում սովորել է ոսկերչի մասնագիտություն, այնուհետև ուսումը շարունակել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում: Ուսման առաջին կիսամյակի ավարտից հետո զորակոչվել է զինվորական ծառայության:

Դիրքերում տարվող մարտական հերթապահությունը բարձր մակարդակով կատարելու համար, բացի մասնագիտական պատրաստությունից, նա կարևորեց զինծառայողների մարտական ոգին, առանց որի հնարավոր չէ պահել հայրենիքի սահմանները: *«Պետք է սիրել հայրենիքը, արժևորել մեր նախնիների կատարածը և*

գիտակցաբար նվիրվել սեփական պարտականությունների իրականացմանը: Մենք մի այնպիսի տարածաշրջանում և այնպիսի հարևանների շրջապատում ենք ապրում, որ իրավունք չունենք անզգուշություն դրսևորելու: Այս երկրի սահմանները գծվել են մեր հերոս տղաների թափած արյամբ, ուստի՝ պարզապես իրավունք չունենք թուլանալու: Ամուր պահելով մեզ վստահված դիրքը՝ մենք ամրապնդում ենք մեր ընտանիքի, հարազատների ու բարեկամների, մեր երկրի անվտանգությունը: Կարծում եմ, այս պարզ ճշմարտությունը պետք է գիտակցի յուրաքանչյուր զինծառայող և ըստ այդմ կատարի իր առաքելությունը: Միայն այսպես կարող ենք մեր արժանի տեղն ունենալ արևի տակ», - մեզ հետ զրույցում ասաց շարքային Ա. Մազմանյանը:

2017 թվականի փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերը տեղի ունեցած դեպքերի ժամանակ Աշոտը նույնպես դիրքերում էր: Հենակետի պատասխանատու, լեյտենանտ Արմեն Գրիգորյանի կողմից առաջադրված մարտական առաջադրանքները ճիշտ և ժամանակին կատարելով՝ դիպուկահար, շարքային Աշոտ Մազմանյանն աչքի է ընկել իր խիզախությամբ ու մասնագիտական բարձր պատրաստվածությամբ: Գիտակցաբար, վստահորեն և առանց խուճապի մատնվելու կատարելով հրամանատարի ցուցումները, նա կարողացել է պատվով կատարել հայրենիքի պաշտպանի վեհ առաքելությունը՝ ցուցաբերելով հայրենիքի հանդեպ նվիրվածությունն ու ուսուցման ընթացքում ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտություն: Իսկ հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցման անփառունակ փորձի մասին պատմեց հետևյալը. *«Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբի հավաստանշումից հետո լեյտենանտ Արմեն Գրիգորյանի հետ բարձրացանք վերև և մարտական դիրքի աջ հատվածում կրակային դիրքեր զբաղեցնելով, սպասեցինք նրա հրամաններին: Որոշ ժամանակ անց, երբ հակառակորդը հայտնվել*

էր ուղիղ նշանառության տակ և կրակելու համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել՝ հրամանատարի հրամանով սկսեցինք ակտիվ կրակ վարել: Իմ և գնդացրորդի կողմից արձակված առաջին կրակահերթից հետո նկատեցինք, որ հակառակորդի զինվորներից երկուսն ընկան:

Դրանից հետո հակառակորդը մի քանի անգամ փորձել է հետ գալ դիակները տանելու, սակայն կրկին կորուստներ է կրել՝ մարտադաշտում թողել 5 ասկյարների դիակներ ու ճողոպրել», - դեպքի մասին հակիրճ պատմեց շարքային Աշոտ Մազմանյանը՝ շեշտելով, որ դիրքի տղաները մշտարթուն են ու զգոն՝ ցանկացած պահի կազմ ու պատրաստ պաշտպանվելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև անդառնալի հակահարված հասցնելու հակառակորդին:

Մեծ հնչեղություն ստացած այս հերոսական արարքը համեստորեն ներկայացնելով ընդամենը որպես *«սեփական պարտականությունների կատարում»*, շարքային Աշոտ Մազմանյանն ավելի է բարձրացնում իր և ծառայակից ընկերների սխրանքի իրական նշանակությունը:

«Հաջողության գրավականը՝ գիտակցաբար և նվիրված ծառայությունն է». սա Աշոտի և նրա ընկերների՝ հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում գործելու հիմնական նշանաբանն է, որին հետևելով առաջադիմություն կարող է գրանցել յուրաքանչյուր զինծառայող:

Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցման փորձը կասեցնելիս ցուցաբերած անձնական արիության ու խիզախության համար ԼՂՀ նախագահի կողմից շարքային Աշոտ Մազմանյանը պարգևատրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Արիության համար» մեդալով:

Մայսուրյան Գագիկ Միհրանի

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏՔՆ Է»

«Զինծառայության և մասնավորապես դիրքապահի պարտականություններին վերաբերող բոլոր հարցերին, նույնիսկ մանրուք թվացող, ես մոտենում եմ ամենայն լրջությամբ: Ինձ վստահված ցանկացած առաջադրանք կատարում եմ ամենայն պատասխանատվությամբ՝ հասկանալով, որ նաև իմ ծառայության որակից է կախված եղբայրներիս, քույրերիս ու հարազատներիս անվտանգությունը: Այս ամենը ես կատարում եմ ոչ թե ստիպողաբար, այլ գիտակցաբար: Հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուր քաղաքացու ոչ միայն սահմանադրական, այլև սրբազան պարտքն է», - սա շարքային Գագիկ Մայսուրյանի սեփական պատկերացումներն ու վերաբերմունքն է դիրքապահի պարտականությունների վերաբերյալ:

Գագիկ Միհրանի Մայսուրյանը ծնվել է 1998 թվականի հունիսի 25-ին Երևան քաղաքում: Դպրոցական վերջին տարիներին ուսմանը զուգահեռ մասնակցել է համակարգչային դասընթացների, որն ավարտելուց հետո՝ նախքան բանակ զորակոչվելը, որպեսզի պարապ չմնա, զբաղվել է տան գործերով: Զորակոչվել է զինծառայության 2016 թվականի հուլիսին: Այժմ երկու եղբայրներով ծառայում են նույն զորամասում:

Խոսելով դիրքերում մարտական հերթապահությունը բարձր մակարդակով կատարելու մասին՝ շարքային Գ. Մայսուրյանը նախևառաջ կարևորեց անձնակազմի միջև տիրող ընկերական,

ընտանեկան մթնոլորտը. *«Եթե դիրքի անձնակազմի միջև ընտանեկան մթնոլորտ է տիրում, ապա զինվորները միմյանց հուզող հարցերը ընդունում են որպես սեփական խնդիր և օգնում են իրար դրանք վերացնելու համա: Արդյունքում՝ ապահովված է մարտական խնդիրները հաջողությամբ կատարելու նախապայմանը:*

Եթե որևէ մեկն իմ նկատմամբ բարի քայլ է կատարում, ես էլ փորձում եմ նույն կերպ պատասխանել: Եվ հակառակը: Արդյունքում անձնակազմի միջև ձևավորվում են այնպիսի հարաբերություններ, որտեղ յուրաքանչյուրը ձգտում է ինչ-որ բանով օգնել իր ընկերոջը, - ոգևորված պատմում է շարքային Մայսուրյանն ու հավելում, - դիրքապահի պարտականությունների կատարումը կոլեկտիվ մտածելակերպ ու գործելաոճ է պահանջում, քանի որ միայն միասնական ջանքերով է հնարավոր ձախողել հակառակորդի մտադրությունները»:

Ինչ վերաբերում է մասնագիական պատրաստվածությանը, ապա շարքային Գագիկ Մայսուրյանն այս հարցում կարևորեց անցկացվող պարապմունքներն ու փորձի փոխանակումը: *«Ինչպես մշտական տեղակայման վայրում, այնպես էլ դիրքերում պարբերաբար պարապմունքներ են անցկացվում: Բացի դրանից, թե՛ հրամանատարական կազմը, թե՛ ավագ դիրքապահներն իրենց փորձն ու գիտելիքներն են փոխանցում նորեկներին: Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում կան նրբություններ, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ: Այդ փորձն ու հմտություններն ավագներն ինձ են փոխանցել, ես՝ նորեկներին, - ասում է շարքային Գ. Մայսուրյանն ու ավելացնում, - ինչպես ժողովրդական խոսքն է ասում. «վատ աշակերտ չի լինում, ամեն ինչ ուսուցանողից է կախված»:*

Շարքային Գագիկ Մայսուրյանի կարծիքով դիրքապահի պարտականությունների կատաման ընթացքում կան այնպիսի պարտականություններ, որոնք ինքնըստինքյան պետք է ամրագրվեն

յուրաքանչյուրի ենթագիտակցության մեջ, դառնալով նրա գործունեության անբաժան մասը: Դրանց թվում Գագիկը մասնավորապես նշում է զգոնությունն ու անվտանգության կանոնների պահպանումը, թե՛ դիտարկումների կատարման ընթացքում, թե՛ զենքի հետ շփվելիս և թե՛ ընդհանրապես առօրյա ծառայության ընթացքում. *«Մարտական հերթապահության կրման ընթացքում պետք է ամեն ինչին լուրջ և ուշադիր լինել: Չպետք է մտածես, որ հակառակորդը հեռու է, հետևաբար կարելի է շեղվել ծառայությունից: Հատկապես դիտարկումների կատարման ընթացքում պետք է զգոն և ուշադիր լինել, այլապես վտանգի ես ենթարկում այն ամենը, ինչի համար այստեղ ենք գտնվում, ինչի համար պայքարել է մեր ավագ սերունդը: Դա պարզապես անթույլատրելի է: Անթույլատրելի և անընդունելի է նաև զենքի հետ վարվելիս անվտանգության կանոնների խախտումը, որից երբեմն դժբախտ պատահարներ են տեղի ունենում»:*

Ահա այսպիսինն են Շարքային Գագիկ Մայսուրյանի պատկերացումներն ու վերաբերմունքը ծառայության և, մասնավորապես, դիրքապահի պարտականությունների կատարման նկատմամբ, որոնք նրան թույլ են տալիս բարձր պատասխանատվությամբ կատարելու սեփական պարտականությունները, հանդես գալով որպես սահմանի տվյալ հատվածի հուսալի պաշտպան:

Մանուչարյան Մայիս Արսենի.

ԴԻՐՔԻ ԱՎԱԳԸ

Կրտսեր սերժանտ Մայիս Արսենի Մանուչարյանը ծնվել է 1997թ. դեկտեմբերի 7-ին Դիլիջան քաղաքում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ 2012-2015 թթ. ուսումը շարունակել Դի լիջանի պետական քոլեջում՝ ձեռք բերելով ավտոփականագործի մասնագիտություն: Զորակոչվել է զինծառայության 2016 թվականին:

Ունենալով գիտելիքների որոշակի պաշար և օժտված լինելով կազմակերպչական ունակություններով՝ Մայիս Մանուչարյանը ծառայության առաջին իսկ օրերից դրսևորել է մասնագիտական ունակությունները կատարելագործելու պատրաստակամություն և հասել ցանկալի արդյունքների: Այս ամենն անմիջապես գրավել է հրամանատարության ուշադրությունը և նա անցնելով կրտսեր հրամանատարական դասընթացներ, արժանացել է կրտսեր սերժանտ զինվորական կոչման:

Ապրիլյան առճակատման ժամանակ Մ. Մանուչարյանը դեռևս նախապատրաստական ստորաբաժանման կազմում էր: Բայց, քանի որ հակառակորդն իրենց ուղղությամբ նույնպես մարտական գործողություններ է ձեռնարկել, նա ինքնըստինքյան դարձել է ծավալված իրադարձությունների մասնակիցը: Ինչպես հայտնի է, մեր տղաների ճիշտ և ժամանակին ձեռնարկած քայլերի շնորհիվ, «Եղնիկներում» հնարավոր էր դարձել առանց կորուստների հետ մղել հակառակորդին՝ խափանելով նրա մտադրությունները: Մ. Մանուչարյանի համար սա մարտական մկրտություն էր և

ստանձնելով դիրքապահի, իսկ այնուհետև դիրքի ավագի պարտականությունները, կրտսեր սերժանտն առաջադրված մարտական խնդիրները կատարել և կատարում է ամենայն պատասխանատվությամբ՝ գիտակցելով, թե դիրքերում որքան կարևոր են թեկուզև մանրուք թվացող պարտականությունների ճիշտ ու ժամանակին կատարումը:

Ինքն անձամբ սեփական ձեռքբերումները պայմանավորում է բարեխիղճ ու պատասխանատու զինծառայությամբ: *«Նախքան կրտսեր հրամանատարական կոչմանն արժանանալը՝ լինելով շարքային, կարողացել եմ ճիշտ հասկանալ շարքային անձնակազմի հոգեբանությունը, վերադաս հրամանատարության կողմից մեր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի նրբությունները: Դրանք օգտագործելով՝ հարգալից վերաբերմունք եմ ցուցաբերել ինչպես ծառայակից ընկերների, այնպես էլ վերադաս հրամանատարության նկատմամբ: Այս ամենը զուգորդելով զինծառայության մեջ հմտանալու, գիտելիքներս անընդհատ խորացնելու և տրված հրահանգները ժամանակին կատարելու հետ, կարողանում եմ հաջողություններ արձանագրել»*, - մեզ հետ զրույցում ասաց կրտսեր սերժանտ Մ. Մանուչարյանը՝ հավելելով, որ եթե մարդու մեջ հայրենասիրական մղումներ են լինում, ապա նա այդ ամենը կարողանում է կատարել պատշաճ մակարդակով ու հպարտության զգացումով:

«Ինչ վերաբերում է կոնկրետ դիրքի ավագի պարտականությունների կատարմանը, ապա այդ սրբազան առաքելությունը պատվով կատարելու առաջին նախապայմանը զգոնությունն է: Գիշեր թե ցերեկ, ցրտին թե տապին պետք է ամենայն պատասխանատվությամբ կատարել սեփական պարտականությունները: Բացի զգոնությունից, որպես դիրքի ավագ պետք է կարողանալ ճիշտ կազմակերպել դիրքում իրականացվող բոլոր գործընթացները՝ պահպանելով արդարության սկզբունքը: Դրա

համար այնպես եմ կազմակերպում ծառայությունը, որ բոլոր զինծառայողներն էլ հավասարաչափ կերպով ընդգրկված լինեն առաջադրված խնդիրների կատարմանը՝ կենցաղայինից մինչև մարտական հերթապահություն: Արդյունքում՝ տղաների մոտ ձևավորվել է ընկերական հարաբերություններ, պատրաստ ցանկացած հարցում մեկ-մեկու օգնելու, դժվարությունները միասնաբար հաղթահարելու: Իմ կարծիքով այլ կերպ հնարավոր չէ կատարել դիրքապահի պարտականությունները», - ասաց դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Մայիս Մանուչարյանը՝ ընդգծելով, որ այս ամենն ինքն ասում է սեփական փորձից ելնելով՝ գործնականում դրանց նշանակությունը գիտակցելով:

Մարգարյան Գուրգեն Ռուբենի.

«ՄԱՍՆԱԳԻՏՈՐԵՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՐԵՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՎԵՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ»

Պաշտպանության բանակի շարքերում քիչ չեն նաև այն տղաները, ովքեր զինվորական ծառայությունից ազատվելու հիմնավոր պատճառներ ունենալով, ոմանց համար որքան էլ որ անհասկանալի, բայց պատրաստակամություն են հայտնում և ինքնակամ ներկայանում ծառայության՝ իրենց նվիրական պարտքը կատարելով Հայրենիքի հանդեպ: Նրանցից մեկն էլ Գուրգեն Ռուբենի Մարգարյանն է, ում հանդիպեցինք ՊԲ գնդապետ Սամվել Գրիգորյանի հրամանատարությամբ գործող զորամասի մարտական դիրքերում:

Ծնվել է 1995 թվականի ապրիլի 28-ին քաղաք Երևանում: Վեց տարեկանից ընտանիքով տեղափոխվել են Ռուսաստանի Դաշնության Ռոստով քաղաք, որտեղ և ապրել է նախքան զորակոչվելը: Հայրենիք է վերադարձել հենց զինծառայության նպատակով և 2016 թվականի հունվարից բարեխղճորեն կատարում է իր ծառայողական պարտականությունները՝ հանդես գալով որպես վստահելի ընկեր ու օրինակելի դիրքապահ:

Ավելի քան մեկուկես տարի է ինչ շարքային Գուրգեն Մարգարյանը ծառայում է Պաշտպանության բանակում և բավականին մեծ փորձ ունի դիրքապահի պարտականությունների կատարման բնագավառում: Առաջադրված մարտական խնդրի

բարեհաջող կատարման համար առաջին հերթին կարևորում է յուրաքանչյուր զինծառայողի մասնագիտական պատրաստվածությունն ու պարտականությունների իմացությունը: Այդ նպատակով՝ վերադաս հրամանատարությունը պարբերաբար զրույցներ է ունենում անձնակազմի հետ, անհրաժեշտ հրահանգավորումներ կատարում, որպեսզի մարտ վարելու անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուրը հստակորեն կատարի իր պարտականությունները:

Ինչպես պարզվեց շարքային Գուրգեն Մարգարյանի հետ ունեցած զրույցից, նա հստակ գիտակցում է իր և մյուս տղաների կատարած գործի կարևորությունն՝ ընդգծելով. *«Առաջադրված խնդիրներին համապատասխան՝ անընդհատ դիտարկումներ ենք իրականացնում և արդյունքների մասին պարբերաբար զեկուցում վերադաս հրամանատարությանը: Վերջին շրջանում հակառակորդի դրսևորած ակտիվության պայմաններում, երբ կիրառում են տարբեր տեսակի զենքեր, հատկապես հրետանային զինատեսակներ, կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր գործողությունից առաջ, մանավանդ, թշնամու թիկունքում կատարվող տեղաշարժի ժամանակին հայտնաբերումն ու հրամանատարությանն իրազեկելը:*

Քանի որ հակառակորդը հետախուզադիվերսիոն գործողութունները հիմնականում իրականացնում է գիշերային պայմաններում, ապա առանձնահատուկ ուշադրությամբ ենք կատարում մեր պարտականությունները գիշերային կամ սահմանափակ տեսանելիության պայմաններում, որպեսզի կարողանանք ժամանակին հայտնաբերել հակառակորդին և կատարել դրանից բխող անհրաժեշտ քայլեր»:

Գուրենն իր խոսքում վստահեցրեց նաև, որ մասնագիտորեն և հոգեբանորեն պատրաստ են կատարելու հայրենիքի պաշտպանի վեհ առաքելությունը:

Խոսելով զինծառայության և, մասնավորապես, մարտական հերթապահության կրման մասին, շարքային Մարգարյանը կարևորեց նաև կոլեկտիվի միասնականությունը, միմյանց նկատմամբ վստահությունն ու ընկերական վերաբերմունքը: Սրանք այն անհրաժեշտ նախապայմաններն են, առանց որոնց տղաներն իրենց առաջադրված խնդիրները կատարել չեն կարող, որքան էլ որ լավ տիրապետեն պարտականություններին:

«Ժամանակի ընթացքում տղաների միջև ստեղծվել են ընկերական այնպիսի հարաբերություններ, որ կարծես թե բոլորս գործում ենք մեկ մարդու պես: Կարծում եմ՝ առանց ընկերական վերաբերմունքի, առանց իրար հասկանալու չենք կարող լիարժեքորեն կատարել դիրքապահի պարտականությունները: Բոլոր դիրքապահներն էլ գիտակցում են, որ սա այն վայրը չէ, որտեղ կարող են դրսևորել անձնական-եսասիրական մղումներ, դրանով իսկ վտանգելով և՛ մեր կյանքը, և՛ մեր ժողովրդի անվտանգությունը», - նշում է շարքային Գուրգեն Մարգարյանը՝ հավելելով, որ տղաների միջև առկա ջերմ ընկերական հարաբերությունները թույլ են տալիս հաղթահարել դիրքերում ծագած բոլոր դժվարությունները և վստահորեն կատարել հայրենիքի հանդեպ պարտքը:

Մարտիրոսյան Վահրամ Մարտունի.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Վահրամ Մարտունի Մարտիրոսյանը ծնվել է 1997 թվականի փետրվարի 9-ին Երևան քաղաքում: Նախքան զորակոչվելը սովորել է տեղի գյուղատնտեսական քոլեջում:

Զինծառայության ընթացքում շարքային Վ. Մարտիրոսյանը հատկապես աչքի է ընկել փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերը հակառակորդի ձեռնարկած դիվերսիոն ներթափանցման փորձը կասեցնելու գործողության ժամանակ: Հետևելով դիրքի ավագ, սերժանտ Սամվել Խաչատրյանի հրահանգներին՝ նա դիրքապահի պարտականությունները կատարել է բարձր մակարդակով:

Ինչ վերաբերում է ընդհանրապես ծառայողական պարտականությունների կատարմանը, ապա այս հարցում շարքային Վ. Մարտիրոսյանը կարևորում է ուսումնական գործընթացում թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքների ժամանակ իրենց մատուցված նյութի յուրացումը: *«Դրա կարևորությունը հատկապես դրսևորվում է այն ժամանակ, երբ հրամանատարության կողմից որևէ առաջադրանք կատարելու անհրաժեշտություն է առաջանում: Եթե պարապմունքների ընթացքում մատուցված գիտելիքները չսովորենք, մենք չենք կարողանա գործնականում մեր պարտականությունները կատարել»*, - նշում է նա՝ ընդգծելով, որ զինծառայության ամենօրյա գործունեությունը նպատակաուղղված է հենց նրան, որպեսզի ստեղծվի կուռ, միասնական և մարտունակ կոլեկտիվ, որը

ցանկացած պահի կկարողանա կատարել իր հայրենանվեր առաքելությունը:

«Առաջադրված խնդիրների կատարման համար կարևոր նշանակություն ունի նաև մասնագիտական պատրաստվածությունը, կցագրված զենքին ու զինամթերքին տիրապետելը: Դիրքապահներիս համար զենքը դարձել է մեր անբաժան ուղեկիցը և այլ կերպ չէր էլ կարող լինել: Եթե մերոնք վարպետորեն չտիրապետեին իրենց կցագրված զենքի կիրառմանը, ապա չէինք կարողանա հետ մղել նրանց դիվերսանտներին կամ այդքան կորուստներ չէինք պատճառի», - մեզ հետ զրույցում ասաց շարքային Վ. Մարտիրոսյանը՝ նկատելով, որ ընդհանրապես, իրենց մոտ մասնագիտական պատրաստվածությունը բարձր մակարդակի վրա է դրված:

Բացի դրանից, շարքային Վ. Մարտիրոսյանի կարծիքով՝ *«Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում յուրաքանչյուր զինծառայող պետք է հստակորեն իմանա իր կոնկրետ անելիքը, տարածքի, հակառակորդի և սեփական դիրքերի աշխարհագրական կառուցվածքն ու տեղաբաշխվածությունը: Մասնագիտական պարտականությունները կատարելագործելու նպատակով, նախքան դիրքեր այցելելը, համապատասխան պարապմունքներ ենք կատարում, հմտանում կցագրված զենքից կրակ վարելուն, մի խոսքով՝ ձեռք բերում անհրաժեշտ վարժվածություն՝ մարտական հերթապահության իրականացման ընթացքում դրանք կիրառելու համար: Այնուհետև գալով դիրքեր՝ տեղում նույնպես իրականացնում ենք ամենօրյա պարապմունքներ, լինի գիշեր, թե ցերեկ, որպեսզի հակառակորդի ցանկացած գործողության դեպքում ամեն մեկը հստակորեն տիրապետի իր անելիքներին»:*

Հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցման փորձը կասեցնելիս ցուցաբերած անձնական

արիության ու խիզախության համար շարքային Վահրամ Մարտունի Մարտիրոսյանը ԼՂՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Զգոնություն, մասնագիտական պատրաստվածություն, անվտանգության կանոնների պահպանում, կարգապահություն, մշտադիտարկման իրականացում, մարտական բարձր ոգի. ահա այն հիմնական, բայց ոչ բոլոր նախապայմանները, որոնք հիմք են հանդիսացել առաջադրված մարտական խնդիրները կատարելու համար: Սրանք նաև այն կարևոր գործոններն են, որոնց հետևելով յուրաքանչյուր զինծառայող կարող է պատվով կատարել հայրենիքի պաշտպանի վեհ առաքելությունը:

Մելքումյան Արման Պողոսի.

«ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԾԱՌԱՅԵԼԸ, ՄԱՆԱՎԱՆԴ ԴԻՐՔԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ»

Արցախյան ազատամարտն ու վերջին տարիներին մեր հայրենիքին սպառնացող բացահայտ ու անբացահայտ մարտահրավերներին դիմակայելու հայկական բանակի ունակությունն ապացուցում են, որ այն կուռ, կազմակերպված և մշտապես կատարելագործվող կառույց է: Լինելով մեր ժողովրդի անվտանգության երաշխավորը, նրա հոգևոր ու նյութական արժեքների կրողն ու պաշտպանը, բանակը մշտապես հմտորեն կատարում է իր պարտականությունները և ունի բարոյակամային բարձր որակներով օժտված, գիտակից զինծառայողների կարիք:

Թե որն է հայոց բանակի զինվորի տեղն ու դերը, ինչ առաքելություն է նա կատարում կանգնելով Հայրենիքի պաշտպանության դիրքերում, ինչ է մտածում ազգի, հայրենիքի ու սեփական պարտականությունների կատարման մասին, փորձեցինք պարզել գնդապետ Կարեն Գրիգորյանի հրամանատարությամբ գործող զորամասի զինծառայող, շարքային Արման Պողոսի Մելքումյանից:

Նա ծնվել է 1998 թվականի մայիսի 31-ին Մասիս քաղաքում: Դպրոցն ավարելուց հետո 2016 թվականին զորակոչվել է բանակ՝ իր քաղաքացիական պարտքը Հայրենիքին մատուցելու համար:

Մեկ տարուց ավելի է, ինչ Արմանը ծառայում է Պաշտպանության բանակում: Ուսումնական գումարտակում համապատասխան պատրաստություն անցնելով՝ ընդգրկվել է մարտական հերթապահություն կատարող ստորաբաժանման կազմում, հասցրել ծանոթանալ ծառայության բոլոր նրբությունների հետ և ինչպես ասում են՝ «թացն ու չորն իրարից ջոկել գիտի»:

Նրա կարծիքով, զնծառայության ընթացքում երտասարդների մտածելակերպի մեջ շատ բան է փոխվում. *«Դառնում ենք ավելի հասուն ու ավելի իրատեսորեն ենք ընկալում կյանքը, տեղի ունեցող իրադարձություններն ու դրանց նշանակությունը: Հայոց բանակի զինվորն առաջին հերթին Հայրենիքի նվիրյալ պաշտպան է, նրա անվտանգության երաշխավորը: Իսկ կանգնելով նրա պաշտպանության դիրքերում և կատարելով դիրքապահի պարտականություններ՝ գործնականում ապացուցում ես, որ ցանկացած գնով պատրաստ ես կատարելու այդ առաքելությունը»:*

Շարքային Ա. Մելքումյանը խոստովանեց, որ նախքան զորակոչվելը շատ քիչ բան գիտեր ծառայության մասին: Դրանց մի մասը, ինչպես հետագայում պիտի պարզվեր, չէին համապատասխանում իրականությանը: Ճիշտ է, ծառայության սկզբում դժվարություններ ու խնդիրներ եղել են, մասնավորապես կապված նոր միջավայրի ու կյանքի նոր պայմաններին հարմարվելու հետ: Սակայն, շնորհիվ հրամանատարների ու ծառայակից ընկերների ցուցաբերած վերաբերմունքի, կարճ ժամանակում ինտեգրվեց բանակային կյանքին: Այժմ այն համոզմունքին է, որ յուրաքանչյուր երիտասարդ պետք է ծառայի Հայոց բանակում ո՛չ միայն իր պարտքը կատարելու համար, այլև ֆիզիկապես ու հոգեբանորեն ավելի կոփվելու համար:

«Հայրենիքի պաշտպանությունը մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Ով զարտուղի ճանապարհներով խուսափում է այդ պարտքը կատարելուց, նա արժանի չէ այս հողի

զավակը կոչվելու: Ուրեմն՝ հայրենիքին ծառայելը, մանավանդ դիրքապահի պարտականությունների կատարումը, արժանապատվության չափանիշ պետք է լինի բոլորի համար: Մեկ տարուց ավելի է ինչ ծառայում եմ բանակում և կարող եմ վստահաբար ասել, որ այս ընթացքում ոչ միայն զինվորականի մասնագիտություն եմ ձեռք բերել, այլև ավելի եմ կայացել, կոփվել ֆիզիկապես ու բարոյապես, ձեռք բերել նոր գիտելիքներ Հայոց պատմության, մեր ժողովրդի կրած հաղթանակների ու դառը պարտությունների, նրա նվիրյալ զավակների վերաբերյալ», - ասաց շարքային Ա. Մելքումյանը:

Արմանի կարծիքով, զինվորն իր երկրի ու ազգի նվիրյալ քաղաքացին պետք է մնա նաև ծառայությունից հետո, քանի որ ժամանակի հրամայականն է այդպիսին:

«Մենք ապրում ենք մի այնպիսի տարածաշրջանում և այնպիսի երկրների հարևանությամբ, որ ինչպես ապրիլյան մարտական գործողությունները ցույց տվեցին, ցանկացած պահի պետք է ազգ-բանակ դառնանք, կանգնենք դիրքապահի կողքին՝ հայրենիքի անվտանգությունն ապահովելու համար: Դրա համար յուրաքանչյուր հայ տղամարդ պետք է տիրապետի զենքին ու զինվորականի մասնագիտությանը: Այս առումով զինծառայության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն անփոխարինելի են և անհրաժեշտ են բոլորիս», - մեզ հետ զրույցում վստահորեն իր կարծիքն է հայտնում դիրքապահի պարտականությունները կատարող, շարքային Արման Մելքումյանը:

Միքայելյան Կարեն Արմենի.

«ՏՂԱ ԳԱԼԻՍ ԵՆՔ, ՏՂԱՄԱՐԴ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ»

Դիրքապահի պարտականությունները լավագույնս կատարող զինծառայողների առօրյային ծանոթանալու, նրանց հետ զրուցելու համար այցելեցինք Պաշտպանության բանակի գնդապետ Ս. Շաքարյանի հրամանատարությամբ գործող զորամասի մարտական դիրքեր: Տեղ հասնելուն պես՝ զինծառայության և, մասնավորապես, դիրքապահի պարտականություններին առնչվող խնդիրներին ու առանձնահատկություններին ծանոթանալու նպատակով, մենք անմիջապես, ինչպես ասում են «ոտքի վրա զրույցի բռնվեցինք» դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Կարեն Արմենի Միքայելյանի հետ:

Ծնվել է 1997 թվականի դեկտեմբերի 10-ին Երևան քաղաքում: 9- րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է պետական տեխնոլոգիկական քոլեջում՝ ստանալով ոսկերչի մասնագիտություն: Զորակոչվել է զինծառայության 2016 թվականի հունվարին: Ճիշտ է, ոսկերչի մասնագիտությունը դիրքապահի պարտականությունների կատարման հետ ուղղակի առնչություն չունի, բայց երկուսի դեպքում էլ պահանջվում է ճշգրտությամբ կատարել առաջադրված խնդիրները, դիրքապահի պարագայում՝ ավելի մեծ ճշգրտությամբ ու պատասխանատվությամբ:

Զինծառայության ընթացքում դրսևորելով անձնական պատասխանատվություն ու նախաձեռնողականություն, դեռևս շարքային Կարեն Միքայելյանը գրավել է հրամանատարության ուշադրությունը: Այնուհետև անցնելով կրտսեր հրամանատարական

դասընթացներ՝ արժանացել է կրտսեր սերժանտի զինվորական կոչման և այժմ որպես դիրքի ավագ նրան է վստահված մեր հայրենիքի որոշակի հատվածի պահպանությունն ու պաշտպանությունը:

Դիրքի ավագը ծառայությունն ընդհանրապես, և դիրքապահի պարտականությունների կատարումը մասնավորապես, համարում է սրբազան գործ ու այդ գիտակցությամբ էլ իր պարտքն է կատարում. *«Այդ պարտքի հետ միասին նաև պաշտպանում եմ ընկերներիս, հարազատներիս, մեր զոհված ազատամարտիկների գործն եմ շարունակում, ովքեր իրենց կյանքի գնով ազատագրել են մեր հայրենիքի այս հատվածը: Մեզանից պահանջվում է, որ պահենք ու պաշտպանենք այն: Ես հպարտանում եմ, որ մեզ վստահում են մեր հայրենիքի պետական սահմանի մի հատվածի պաշտպանությունը և վստահաբար ասում եմ, որ պատվով կկատարենք այդ առաքելությունը ու ոչ մի դեպքում չենք խոնարհվի թշնամու առաջ»:*

Խոսելով զինծառայության խնդիրների ու առանձնահատկությունների մասին, կրտսեր հրամանատարը գտնում է, որ դրանք հիմնականում հաղթահարելի են: Առանձնահատկությունների վերաբերյալ էլ իր տեսակետն ունի, և գտնում է, որ ծառայությունը մի շարք առավելություններ է տալիս մարդուն. *«Այդ ընթացքում մենք կոփվում ենք ֆիզիկապես, մեր հայրենիքը ընկալում ենք ամբողջ խորությամբ և, ինչպես ասում են, «տղա գալիս ենք, տղամարդ վերադառնում»:*

Ինչ վերաբերում է կրտսեր հրամանատարի պարտականությունների կատարմանը, ապա այն ավելի մեծ պատասխանատվություն է պահանջում, քանի որ յուրաքանչյուր խնդրի կամ հարցի կապակցությամբ որոշում պետք է ընդունել ոչ թե պահի ազդեցության տակ, այլ մտածված կերպով: Ինչպես պարզվում է նրա հետ ունեցած զրույցից, կրտսեր սերժանտ Կարեն Միքայելյանը գիտակցում է իր վրա դրված դիրքի ավագի

պարտականությունների կատարման ողջ պատասխանատվությունը և ամեն ինչ անում է այն պատվով իրականացնելու համար:

«Կյանքն ինքը ծառայություն է և պետք է կարողանալ ճիշտ կողմնորոշվել յուրաքանչյուր՝ նույնիսկ մանրուք թվացող հարցերում: Ինչպես քաղաքացիական կյանքում, այնպես էլ այստեղ, պետք է կարողանաս ճիշտ հարաբերվել շրջապատիդ հետ, ստեղծես ընկերական մթնոլորտ, որը թույլ կտա ծառայողական պարտականությունները լավ կատարել: Իսկ, եթե կարողանում ես զինծառայության ընթացքում ակտիվություն հանդես բերել, հանդես գալ ընդհանուրի շահերից բխող կազմակերպչական նախաձեռնություններով, ստեղծել ընկերական միջավայր, ապա, հետագա ողջ քաղաքացիական կյանքում կկարողանաս քո արժանի տեղը գտնել, - մեզ հետ զրույցում կիսվում է կրտսեր սերժանտ Կարեն Միքայելյանը, և շեշտում, - առանց ընկերական, միմյանց նկատմամբ հարգալից ու կարեկից վերաբերմունքի, դիրքապահի պարտականությունները կատարել հնարավոր չէ»:

Վերջում դիրքի ավագը, որպես բարեմաղթանք, կոչ արեց բոլոր դիրքապահ զինծառայողներին պատվով կատարել իրենց նվիրական առաքելությունը, իսկ հարազատներին՝ ո՛չ միայն չանհանգստանալ իրենց որդիների համար, այլ նաև հպարտանալ. *«Քանի դեռ մենք կանգնած ենք հայրենիքի սահմանին, նրանք անվտանգ կլինեն, և համբերությամբ զինվելով՝ թող իմանան, որ իրենց որդիները սուրբ գործ են կատարում»:*

Մխիթարյան Իշխան Գևորգի.

«ԴԻՐՔԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՄՆԱՑՈՐԴ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ Է»

Հենց այսպիսի համոզմունքով է Իշխան Գևորգի Մխիթարյանը կատարում դիրքապահի պարտականությունները: Ծնվել է 1997 թվականի դեկտեմբերի 13-ին Երևան քաղաքում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է հայ-հունական պետական քոլեջում, որպես խոհարար-տեխնոլոգ: Զորակոչվել է զինծառայության 2016 թվականի հուլիսին:

Զինծառայության ընթացքում Իշխանն իրեն դրսևորել է որպես կարգապահ և պատասխանատու զինծառայող՝ վստահված ծառայողական պարտականությունները կատարելով ճիշտ ու ժամանակին: Լինելով բանիմաց ու ընկերասեր, կարճ ժամանակում արժանացել է ինչպես վերադաս հրամանատարության, այնպես էլ ծառայակից ընկերների վստահությանը: Ստանալով կրտսեր սերժանտի զինվորական կոչում՝ ստանձնեց դիրքի ավագի պարտականությունները և մեր Հայրենիքի որոշակի հատվածի պահպանության ու պաշտպանության պատասխանատվությունը:

«Այսպիսի բարդ ու պատասխանատու առաքելությունն առանց ծառայակից ընկերների ու վերադաս հրամանատարության գործուն աջակցության՝ հնարավոր չէ հավուր պատշաճի կարտարել: Որպես կապող օղակ հանդես գալով նրանց միջև՝ ես իմ հերթին ամեն ինչ անում եմ և՛ հրամանատարության կողմից առաջադրված խնդիրները կատարելու, և՛ դիրքապահների խնդիրները լուծելու համար:

Իհարկե, դրա համար նախևառաջ պետք է մարդկանց հետ ճիշտ շփվելու ունակություններ ունենալ, այլապես չհասկացված լինելու հանգամանքը դժվարին խնդիրների առաջ կարող է կանգնեցնել: Չէ՞ որ մարդկային հարաբերությունները բավականին բարդ ու բազմաբովանդակ են», - մեզ հետ զրույցում ասաց կրտսեր սերժանտ Իշխան Մխիթարյանը՝ հավելելով, որ անձնակազմի միջև առկա է ընկերական առողջ մթնոլորտ և ցանկացած պահի պատրաստ են օգնել մեկը մյուսին:

Դիրքապահի պարտականությունները կատարելու ընթացքում կրտսեր սերժանտը կարևորում է մարտական հերթապահությանն առնչվող բոլոր հարցերը՝ հավաստիացնելով, որ այստեղ մանրուքներ չկան: *«Հայրենիքի պաշտպանի բարդ ու պատասխանատու պարտականությունների կատարման ընթացքում առաջին հերթին պետք է ուշադիր լինել՝ ինչպես դիտարկումներ կատարելիս, այնպես էլ առօրյա ծառայության ընթացքում: Դիտարկումների կատարման ընթացքում չպետք է շեղվել առաջադրված խնդրի իրագործումից, չհրապուրվել ոչնչով, չշեղել ուշադրությունը, որպեսզի կարողանանք ժամանակին նկատել հակառակորդի գործողությունները, զեկուցենք վերադաս հրամանատարությանը և դրան համապատասխան քայլեր իրականացնենք:*

Երկրորդ կարևոր հանգամանքը՝ մասնագիտական ունակություններին տրիրապետելն է, որի համար տարաբնույթ պարապմունքներ ենք իրականացնում՝ թե՛ մշտական տեղակայման վայրում, թե՛ դիրքերում: Արդյունքում ունենք իրենց գործին հմտորեն տիրապետող զինծառայողներ, ովքեր գիտակցում են առաջադրված մարտական խնդրի և դիրքապահի պարտականությունների կատարման կարևորությունը»:

Խոսելով դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում հայրենասիրական գործոնի դերի մասին, դիրքի ավագն այն որակեց որպես հայրենասիրության գործնական և ամենաբարձր

դրսևորում: *«18-20 տարեկան տղաներն իրենց երիտասարդ հրամանատարների հետ միասին կանգնած լինելով հակառակորդին դեմ հանդիման, երբեմն նաև կյանքի գնով են պահպանում հայրենիքի սահմանների անառիկությունը: Դրանից բարձր հայրենասիրություն, կարծում եմ գոյություն չունի: Այսինքն, եթե զինծառայողների մեջ հայրենասիրական գաղափարներ խորը չլինեին, իսկ Հայրենիքի հանդեպ սերն՝ անկեղծ, ապա նրանք օր ու գիշեր պատասխանատվությամբ ու անձնվիրաբար չէին կատարի այդ առաքելությունը: Դիրքապահի պարտականությունների ստանձնումն արդեն իսկ հայրենասիրություն է: Իսկ դրանց արժանապատիվ կատարումը՝ հայրենասիրության անմնացորդ դրսևորում: Մենք գիտակցաբար ենք մեր պարտականությունները կատարում, քանի որ դրանից է կախված մեր հարազատների, ընկերների ու ժողովրդի անվտանգությունը»*, - մեզ հետ զրույցում ասաց դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Իշխան Մխիթարյանը:

Մկրտչյան Դավիթ Գեղամի.

«ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ԾԱՌԱՅԵԼՆ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՊԱՏԻՎ Է»

Հենց այսպիսի համոզմունքով է Դավիթը զորակոչվել զինծառայության և առանց տրտնջալու, գիտակցաբար, գրեթե մեկ տարի է, ինչ կատարում է իր ծառայողական պարտականությունները: Թերևս, դա է պատճառը, որ ինքն իրեն համարում է ոչ թե պարզապես 2 տարվա զինվորական պարտքը կատարող և օրեր հաշվող անձնավորություն, այլ ժողովրդի հույսն ու ապավենը, իր հայրենիքի պահապանն ու նրա արժանապատիվ քաղաքացին:

Շարքային Մկրտչյանի մոտ այսպիսի համոզմունքը ձևավորվել է նախքան զորակոչվելը, իսկ հաստատվել՝ հատկապես դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում:

Դավիթ Գեղամի Մկրտչյանը ծնվել է 1998 թվականի ապրիլի 15-ին Երևանում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո ընդունվել է համար 2 պետական քոլեջի մարքեթինգի բաժինը: 2016 թվականի հուլիսին երրորդ կուրսն ավարտելուց հետո զորակոչվել է զինծառայության:

Վերադաս հրամանատարությունն ու ծառայակից ընկերները շարքային Մկրտչյանին բնութագրեցին որպես լավ դիրքապահ, պարտաճանաչ զինծառայող ու պարկեշտ ծառայակից: *«Իմ կարծիքով, ես կարողացել եմ զինծառայության ընթացքում դրական կողմերով դրսևորվել՝ շնորհիվ աշխատասիրության ու պատասխանատվության: Պատասխանատվություն վստահված գործի՝ ծառայողական պարտականությունների և հատկապես դիրքապահի պարտականությունների կատարման նկատմամբ: Սա*

ինձ համար սկզբունքային նշանակություն ունի: Միշտ լրջությամբ եմ վերաբերվում հրամանատարության կողմից տրված հրամաններին ու խորհուրդներին՝ գիտակցելով, որ նրանք այն անձինք են, ովքեր ամենօրյա գործունեությամբ նպաստում են մեր երկրի անվտանգության ապահովմանը:

Հայրենիքի պաշտպանության գործում ընդգրկված լինելը պարտքի ու պատասխանատվության մեծ խնդիր է, ինչը պետք է գիտակցեն բոլոր զինծառայողները՝ ծգտելով ոչ թե ժամանակը զուր տեղը վատնել, այլ ինչ-որ մի բան անելով, նպաստել ընդհանուր գործի հաջողությանը: Հայրենիքիս ծառայելն ինձ համար մեծ պատիվ է և կփորձեմ միշտ պատվով կատարել այդ առաքելությունը՝ իմ հնարավորությունների չափով օգտակար լինելով նրան», - մեզ հետ զրույցում ասաց շարքային Դավիթ Մկրտչյանը՝ շեշտելով, որ դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում ձեռք բերած հաջողությունը ոչ միայն իր, այլև ողջ անձնակազմինն է:

«*Դիրքերում բարդ և պատասխանատու ծառայություն ենք կատարում, ինչն անհնարին կլիներ իրականացնել առանց զինակից ընկերոջ աջակցության և հոգատար վերաբերմունքի: Մենք շատ ուրախ ենք, որ մեր կողքին կանգնած են փորձառու հրամանատարներ, որոնք անցել են փառավոր մարտական ուղի և այսօր իրենց փորձն ու զինվորական գիտելիքները փոխանցում են մեզ: Նրանց ներկայությամբ մենք ոգևորվում ենք, իսկ նրանց խորհուրդներով՝ կրթվում ու դաստիարակվում: Մեզ համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները անվտանգ և կազմակերպված մարտական հերթապահություն իրականացնելու համար: Արցախյան ազատամարտի տարիներին նրանք այսպիսի պայմանների մասին երազել անգամ չէին կարող: Հայրենյաց պաշտպանների համար չկային նման հնարավորություններ: Սակայն ազատամարտիկները, հաղթահարելով այդ դժվարությունները, ծնկի բերեցին թշնամուն՝ մեզ ժառանգություն թողնելով մարտունակ*

բանակ, և մենք պարտավորված ենք արժանապատվորեն շարունակել նրանց սկսած ազգանվեր հաղթարշավը»: պահպանել թեքությունը

Չնայած մեկ տարի էլ չկա, ինչ Դավիթը ծառայում է Պաշտպանության բանակում, սակայն այդ ընթացքում կարողացել է ըմբռնել ոչ միայն զինծառայության նշանակությունը հայրենիքի պաշտպանության գործում, այլև հասկացել է, որ այն կարևոր դպրոց է իր հետագա ողջ կյանքի համար:

«Այս ընթացքում ինձ մոտ ձևավորվել և ամրապնդվել են մի շարք դրական հատկություններ: Դրանցից կառանձնացնեի վստահությունը սեփական ուժերի ու հնարավորությունների նկատմամբ, ինքնուրույն որոշումներ կայացնելու և կոլեկտիվ մտածելու ունակությունը, երբ առօրյա գործունեության ընթացքում պատասխանատվություն ես զգում, մտածում ես ոչ միայն քո մասին, այլև ծառայակից ընկերներիդ: Չէ՞ որ պատերազմի ժամանակ մենք բոլորս պետք է մեկս մյուսին թիկունք կանգնենք՝ ընդհանուր հաղթանակ ապահովելու համար», - նշեց Դավիթը՝ հավելելով, որ, իր կարծիքով, բանակը հզոր է հենց այդպիսի հատկանիշներ ունեցող զինծառայողների շնորհիվ:

Յավրումյան Էդմոն Մելիքսեթի.

«ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՁԱԽՈՂԵԼՈՒ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԲՈԼՈՐ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Էդմոն Մելիքսեթի Յավրումյանը ծնվել է 1997 թվականի սեպտեմբերի 10-ին Լոռու մարզի Մեծավան գյուղում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Վանաձորի Լոռեմենտ համալսարանի ռադիոտեխնիկայի բաժնում և երրորդ կուրսից՝ 2016 թվականի հունվարին զորակոչվել պարտադիր ժամկետային զինծառայության:

Շուրջ ինն ամիս է, ինչ Էդմոնը կատարում է դիրքապահի պարտականությունները: Այդ սրբազան առաքելությունը պատվով կատարելու և հայրենիքի սահմաններն անառիկ պահելու համար նա կարևորում է հատկապես զգոնությունն ու անվտանգության կանոնների պահպանումը:

«Ճիշտ է, մանրուքներ մարտական հերթապահության իրականացման ընթացքում չկան, սակայն առավել կարևորում եմ զգոնությունն ու անվտանգության կանոնների պահպանումը: Դրանք միմյանց հետ փոխկապակցված և մարտական հերթապահության անբաժանելի մասն են կազմում: Այդ իսկ պատճառով պետք է ուշադիր լինել, կատարել այն բոլոր հրահանգները, որոնք նախատեսված են անվտանգության նկատառումներով՝ սկսած զենքի և զինամթերքի հետ ճիշտ վարվելուց մինչև դիտարկումների կազմակերպումը և սողուններից պաշտպանվելը:

Իսկ զգոնությունը, մանավանդ դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում, մեր ծառայության

առյուծի բաժինն է կազմում», - մեզ հետ զրույցում ասաց շարքային Էդմոն Յավրումյանը:

Նրա խոսքով, իրենց ընտանիքում մշտապես բարձր են գնահատվել հայրենասիրական գաղափարները, հայրենիքի պաշտպանության և նրա սահմանների անվտանգության ապահովման անհրաժեշտությունը ու այդ գաղափարներով սնվել և դաստիարակվել է պատանի Էդմոնը: *«Զինծառայության սկզբնական շրջանում, բնականաբար ամեն ինչ անսովոր էր, մանավանդ դիրքերում: Հիմա արդեն վստահորեն կողմնորոշվում եմ տեղանքում, տիրապետում կցագրված զենքին, ծանոթացել եմ անվտանգության կանոններին և դիտարկման ընթացքում կարողանում եմ ճիշտ կողմնորոշվել: Իհարկե, այս ամենը հաջողվել է հրամանատարներիս ու ծառայակից ընկերներիս օգնության շնորհիվ: Թե՛ հրամանատարները, և թե՛ ավագ զինակից ընկերներս մշտապես ուշադիր են իմ նկատմամբ, սիրով պատասխանում են իմ բոլոր հարցերին և ծանոթացնում են դիրքերում՝ մարտական հերթապահության կրման առանձնահատկություններին»*, - իր խոսքում նշեց շարքային Է. Յավրումյանը, հավելելով, որ այժմ էլ ինքն է նման վերաբերմունք ցուցաբերում նորեկների հանդեպ:

Ինչ վերաբերում է դժվարություններին ու խնդիրներին, ապա դիրքապահ տղաներին դա հաջողվում է հաղթահարել միասնական ջանքերի, հայրենասիրության ու մասնագիտական պատրաստվածության շնորհիվ:

«Զինծառայության մեջ, թե քաղաքացիական կյանքում ընդհանրապես, միշտ էլ դժվարություններ ու խնդիրներ լինում են: Դրանք հաղթահարելու համար, նախևառաջ, պետք է կամք ցուցաբերել, իսկ դիրքերում այդ բոլորը հաղթահարում ենք համատեղ ուժերով՝ ընկերաբար: Այդ առումով տղաների միջև հաստատված են ջերմ ընկերական հարաբերություններ, և

պատրաստ ենք ամեն հարցում մեկս մյուսին օգնել, սատար կանգնել, որպեսզի կարողանանք կատարել մեզ վրա դրված առաքելությունը:

Հայրենիքի պաշտպանությանը նվիրվելու հարցում իր ուրույն տեղն ունի հայրենասիրականը, քանի որ առանց քո հայրենիքը սիրելու, առանց նրա հերոսական անցյալին ծանոթ լինելու այն կկորցնի ամեն գնով պաշտպանելու իմաստը: Դիրքում կանգնած, հայրենիքի սահմանը պահող զինվորի համար այն ավելի բարձր արժեք ու իմաստ ունի»,- ասում է շարքային Էդմոն Յավրումյանը:

Էդմոն Յավրումյանը իր և մյուս դիրքապահների անունից հավաստիացրեց, որ իրենք իրենց պատասխանատու են համարում հայրենիքի պաշտպանության համար: Այդ հարցում իր ուրույն տեղն ունի մարտական ոգին, որը երբեմն ավելի կարևոր զենք է դառնում, քան իրական զենքը: *«Իսկ հոգևոր և զինվորական զենքի համադրումը, մեր միասնականությունը և հայրենիքին նվիրվածությունը, - Էդմոնի կարծիքով, - անպարտելի են դարձնում մեր բանակը»:* Եվ վստահեցնում է. **«Պատրաստ ենք ձախողելու հակառակորդի բոլոր մտադրությունները»:**

Ոսկանյան Վիգեն Ռաֆիկի.

«ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԱՄԵՆՕՐՅԱ ԲԱՐԵԽԻՂՃ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՄԲ ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՐՏԻՐՈՍՎԱԾ ՏՂԱՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ»

Պաշտպանության բանակի գնդապետ Արմեն Գյոզալյանի հրամանատարությամբ գործող զորամասի մարտական դիրքերից մեկում ենք: Շարքային Վիգեն Ոսկանյանը զորամասի հրամանատարության և դիրքի ավագի կողմից բնութագրվեց որպես լավագույն դիրքապահ և ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարող զինծառայող: Հենց դիրքում էլ նրանից փորձեցինք իմանալ, թե որն է ծառայությունը պատասխանատու, բարեխիղճ կատարելու սեփական գաղտնիքը: Նա արտահայտեց հետևյալ կարծիքը. *«Հատուկ գաղտնիք կամ սկզբունքներ գոյություն չունեն: Պարզապես ինձ տրված առաջադրանքները, իմ պարտականությունները կատարում եմ ամենայն պատասխանատվությամբ, քանի որ գիտակցում եմ դրա նշանակությունն ու կարևորությունը: Կանգնած լինելով դիրքում՝ դիրքապահներով ոչ միայն մեր անվտանգությունն ենք ապահովում, այլև մեր հարևան դիրքի տղաների, մեր հարազատների ու ողջ ժողովրդի: Դժվար է այս ամենը գիտակցել, փորձել աչքաթող անել կամ երկրորդական համարել այդպիսի պարտականությունների կատարումը: Եթե յուրաքանչյուր զինծառայող գիտակցի այս ամենը, և պատասխանատվությամբ կատարի իր ծառայողական պարտականությունները, ապա, կարծում եմ մենք կունենանք ավելի անառիկ, ավելի անվտանգ հայրենիք»*:

Վիգեն Ռաֆիկի Ոսկանյանը ծնվել է 1997 թվականի դեկտեմբերի 14-ին Մարտունու շրջանի Ճարտար համայնքում: Զորակոչվել է զինծառայության 2016 թվականին: Դեռևս պատանի տարիքից զբաղվել է սպորտով՝ թեթև աթլետիկայով, ինչն իր հերթին նպաստել է ծառայողական պարտականությունների բարձր մակարդակով կատարմանը: Մասնավորապես, ֆիզիկական կոփվածությունն օգնել է հաղթահարելու դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում առաջացած մի շարք խնդիրներ՝ դժվարությունները հաղթահարելու, մշտապես զգոն լինելու և դիտորդի պարտականություններն առույգ կատարելու համար: Այս հանգամանքը նրան օգնել է նաև ծառայակից ընկերների ու հրամանատարության շրջանում ճիշտ ընկալվելու և հարգանք ձեռք բերելու տեսանկյունից: Շնորհիվ ֆիզիկական ունակությունների՝ նա կարողացել է բարձր արդյունքներով ավարտել ուսումնական փուլի պարապմունքները՝ արժանանալով *«Լավագույն զինվոր-մարզիկ»* կոչմանը:

Վիգենը զինծառայության և հայրենասիրության, դիրքապահի պարտականությունների կատարման կարևորության մասին գիտակցում էր նախքան զորակոչվելը: Իսկ զինծառայության առաջին ամիսներին, երբ սկսվեց ապրիլյան առճակատումը, այդ ամենն, ինչպես ասում են «միս ու արյուն ստացան»: Ճիշտ է, այն ժամանակ նա դեռևս ուսումնական գումարտակում էր և մարտական գործողություններին անմիջական մասնակցություն չի ունեցել, սակայն, այն ինչ զգացել ու լսել է ծառայակից ընկերներից, երբեք չի մոռանալու:

«Հայրս 90-ականներին մասնակցել է Արցախյան ազատամարտին, մեծ եղբայրս անցած տարի է ավարտել ծառայությունը, և բնականաբար տեղեկացված էի թե՛ պատերազմի, թե՛ զինծառայության մասին: Բայց ապրիլյան իրադարձությունները մեզ համար ավելի մեծ դաս ու փորձ հանդիսացան հետագա

ծառայողական պարտականություններն ավելի մեծ պատասխանատվությամբ կատարելու համար: Բոլոր զինծառայողներն էլ գիտակցաբար են վերաբերվում դիրքապահի պարտականությունների կատարմանը, քանի որ իրենց մաշկի վրա են զգացել նենգ ու դարանակալ թշնամու գործունեությունը: Ոմանց ծառայակից ընկերն է հակառակորդի գնդակից զոհվել, մյուսի հարազատը, և մենք պարտավոր ենք ու մեր ամենօրյա բարեխիղճ ծառայությամբ բարձր կպահենք հանուն հայրենիքի մարտիրոսված տղաների հիշատակը», - ասաց շարքային Վիգեն Ոսկանյանը՝ շեշտելով, որ այդ ամենը քաջ գիտակցում են դիրքի բոլոր զինծառայողները:

Սահակյան Արամայիս Արսենի.

«ԴԻՐՔԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԹԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՏԵՂ ՉՈՒՆԵՆ»

Սերժանտ Արամայիս Սահակյանին հանդիպեցինք գնդապետ Արմեն Գյոզալյանի հրամանատարությամբ գործող զորամասի մշտական տեղակայման վայրում: Մի քանի օր է, ինչ տղաները վերադարձել են մարտական հերթապահությունից, այդուհանդերձ օրվա կարգացուցակով սահմանված պարապմունքներն էին կատարում՝ զենքի և զինամթերքի, պայթուցիկ և թունավոր նյութերի հետ վարվելու, մարտական հերթապահության, պահակային և կայազորային ծառայության կազմակերպման, մի խոսքով՝ անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված բազմաթիվ ու բազմաբնույթ միջոցառումներ:

Չնայած բազմազբաղությանը՝ նա իր հանգստի ժամանակահատվածը պատրաստակամորեն հատկացրեց մեզ և ամենայն լրջությամբ պատասխանեց մեր կողմից տրված զինծառայությանն առնչվող հարցերին:

Արամայիս Արսենի Սահակյանը ծնվել է 1997 թվականի օգոստոսի 24-ին Սպիտակ քաղաքում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի մարքեթինգի բաժինը: Ուսման առաջին կիսամյակն ավարտելուց հետո՝ 2016 թվականին զորակոչվել է ծառայության՝ քաղաքացիական պարտքը կատարելու համար: Իսկ ծառայությունից

հետո շարունակելու է կրթությունը, մարդու կյանքում դրա կարևորությունը հստակ գիտակցելով ու նպատակադրվածությամբ:

Նախ, մենք փորձեցինք պարզել, թե ինչպես է անցնում զինծառայողների առօրյան, և որպես կրտսեր հրամանատար՝ նա ինչպես է այն կազմակերպում:

Սերժանտ Ա. Սահակյանի հավաստմամբ՝ ծառայողական առօրյան բավականին հետաքրքիր է անցնում: Չնայած գոյություն ունեցող դժվարություններին ու խնդիրներին՝ զորամասի հրամանատարությունն ամեն ինչ անում է, որ մարտական հերթապահությունից հետո ամբողջապես կարողանան լիցքաթափվել և հանգստանալ: Իսկ հանգստյան օրերին կազմակերպվում են բազմաթիվ սպորտմասսայական միջոցառումներ, մրցումներ, որոնցով տղաներն ավելի են լիցքաթափվում և նոր ավյուն հավաքում մարտական հերթապահությունն ավելի թարմ ուժերով կրելու համար: *«Ինչ վերաբերում է ջոկին ու նրա առօրյայի կազմակերպմանը, ապա որպես կրտսեր հրամանատար պետք է ասեմ, որ հրամանատար լինելն այնքան էլ հեշտ գործ չէ, ինչպես երբեմն ոմանք են կարծում: Բանն այն է, որ թեկուզև ջոկում, և մասնավորապես դիրքերում, ամենատարբեր բնավորության երիտասարդներ կան, հետևաբար յուրաքանչյուրի հետ յուրահատուկ մոտեցում պետք է ցուցաբերել, այսպես ասած, բոլորի հետ պետք է լեզու գտնել: Ես կարծում եմ, որ որպես կրտսեր հրամանատար կարողանում եմ կատարել իմ պարտականությունները: Դրա կարևորագույն նախապայմաններից մեկն էլ այն է, որ զինծառայողները հրամանատարից ոչ թե պետք է վախենան, այլ պետք է ամեն ինչ հարգանքով ու գիտակցաբար կատարեն»:*

Փորձեցինք պարզել նաև, թե որպես դիրքի ավագ ինչպես է նա կազմակերպում խնդիրներից կարևորագույնը՝ մարտական հերթապահությունը: Արամայիսը համամիտ է, որ մարտական

հերթապահության կազմակերպումը բարդ խնդիր է և այդ ընթացքում պետք է հաշվի առնել ամեն ինչ. *«Այստեղ մանրուքներ չեն լինում թե՛ դիրքեր բարձրանալիս, թե՛ հանգստի կազմակերպման, թե՛ արթուն հերթափոխի ժամանակ, և նույնիսկ՝ բնական կարիքները հոգալիս: Դիրքի ավագի գործը դժվար է այն առումով, որ համարվում ես մարտական հերթապահություն կրող անձնակազմի պատասխանատուն: Պետք է հետևես, որ ամեն ինչ կատարվի ճիշտ ժամանակին ու հաստատված գրաֆիկի համաձայն: Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում բացթողումներն ու թերացումները տեղ չունեն և դա բոլորս ենք գիտակցում: Սա է հաջողության գրավականն ու սահմաններն անառիկ պահելու նախապայմանը»:*

Ինչ վերաբերում է մարտական հերթապահության և առօրյա ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում առաջացած խնդիրներին, ապա ըստ Արամայիս Սահակյանի, դրանք անհրաժեշտության դեպքում լուծվում են հրամանատարության հետ համատեղ ջանքերով:

Հարազատներին բարեմաղթանքներ հղելու առումով սերժանտ Ա. Սահակյանը զուսպ էր և ուղղակի նշեց, որ բարևում է բոլորին ու վստահեցնում, որ անհանգստանալու կարիք չկա, քանի որ սահմանում ամեն ինչ կախված է դիրքապահների զգոնությունից, ինչը նրանք ամենայն պատասխանատվությամբ են կատարում:

Սարգսյան Ռուստամ Տիգրանի.

«ՉՊԵՏՔ Է ՄՈՌԱՆԱՆՔ ԴԱՌՆ ԱՆՑՅԱԼԸ, ՈՐՊԵՍԶԻ ՍՏԻՊՎԱԾ ՉԼԻՆԵՆՔ ԱՅՆ ՆՈՐԻՑ ՎԵՐԱՊՐԵԼ»

Կրտսեր սերժանտ Ռուստամ Սարգսյանը մեկն է Պաշտպանության բանակի այն հազարավոր զինծառայողներից, ովքեր իրենց վերաբերմունքով, մասնագիտական ու մարդկային ունակություններով կարողացել են ձեռք բերել վերադաս հրամանատարության և ենթակա անձնակազմի հարգանքն ու սերը, ծառայության ողջ ընթացքում պատվով կատարելով հրամանատարության կողմից առաջադրված խնդիրները:

Ռուստամ Տիգրանի Սարգսյանը ծնվել է 1998 թվականի ապրիլի 26-ին Արարատի մարզի Ջրաշեն համայնքում: 2016 թվականին զորակոչվելով ծառայության՝ իրեն դրսևորել է որպես ուշիմ ու բանիմաց զինծառայող և ունենալով համապատասխան արժանիքներ, կրտսեր հրամանատարական դասընթացներն անցնելուց հետո նշանակվել է ջոկի հրամանատար: Այսօր արդեն դիրքի ավագը օրինակելի է իր կարգապահությամբ, հետևողականությամբ և ենթակաների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքով:

Ծանոթանալով կրտսեր սերժանտ Ռ. Սարգսյանի հետ՝ մենք փորձեցինք պարզել, թե ո՞րն է հաջողության հասնելու իր գաղտնիքը, ի՞նչ միջոցներ ու մեթոդներ է կիրառում ջոկի ղեկավարումն իրականացնելիս՝ թե՛ հրամանատար-ենթակա

փոխհարաբերություններում, թե՛ մասնագիտական պատրաստվածության տեսակետից:

Ըստ նրա՝ հրամանատար-ենթակա հարաբերություններում, որը զինծառայության ամենատարբեր ոլորտներում հաջողության հասնելու հիմնական գրավականն է, կարևոր է մարդկային վերաբերմունքը, որպեսզի զինվորները հստակ գիտակցեն, որ հրամանատարը բոլոր հարցերում իրենց կողքին է:

«Եթե նրանց նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերվի, ապա թե՛ առօրյա խնդիրների, թե՛ մարտի ժամանակ նրանք թև ու թիկունք կկանգնեն: Ճիշտ է, դժվար է տարբեր միջավայրերից եկած, տարբեր գաղափարների տեր երիտասարդների հետ կոլեկտիվ խնդիրներ իրականացնելը, սակայն, եթե կոլեկտիվի անդամները տեսնում են, որ հրամանատարությունը անշահախնդիր ու արդարացի մոտեցում է ցուցաբերում, ենթականերն էլ ստիպված են լինում իրենց փոխհարաբերությունները կառուցել ազնվության ու արդարության սկզբունքների հիման վրա», - մեզ հետ զրույցում ասաց կրտսեր սերժանտ Ռ. Սարգսյանը՝ հավելելով, որ զորամասում առկա են լավ ավանդույթներ հրամանատար-ենթակա հարաբերություններում:

Իրոք, գաղտնիք չէ, որ զինծառայության ընթացքում հրամանատարից շատ բան է կախված: Նա պետք է իր մասնագիտական, հոգեբանական մեթոդներով, գիտելիքներով ու անձնական օրինակով վերացնի իր և ենթակայի միջև եղած կամ առաջացող անջրպետը և ծառայության կազմակերպման ժամանակ որդեգրի միայն ազնիվ սկզբունքներ՝ գտնելով ու վերացնելով այն պատճառները, որոնք ազդում են ենթակա ստորաբաժանման մարտունակության համար կարևոր նշանակություն ունեցող բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման վրա:

Ջոկի հրամանատարը կարծում է, որ հաջողության հասնելու համար հրամանատարության միակողմանի աշխատանքը բավարար

չէ. *«Զինվորներն իրենց հերթին պետք է խելացի լինեն, նախաձեռնող, որպեսզի կարողանան իրենց մասնագիտական պարտականությունները կատարեն, չէ՞ որ հենց մարդու հնարամիտ գործունեության արդյունքում է զենքն ու զինտեխնիկան ավելի արդյունավետ ծառայում իր նպատակին:*

Մյուս կողմից՝ զինծառայողները պետք է օժտված լինեն որոշակի մարդկային որակներով, դաստիարակված՝ հայրենասիրությամբ, ունակ՝ ուրիշի ցավերը դարմանելու: Այս առումով կարևոր նշանակություն ունի այն միջավայրը, որում ծնվել, դաստիարակվել և մեծացել է մարդը»:

Կրտսեր սերժանտ Ռ. Սարգսյանն այն կրտսեր հրամանատարների թվին է պատկանում, ովքեր կարողանում են մարդկային և հրամանատարական անհրաժեշտ որակներ ցուցաբերելով ղեկավարել ենթակա անձնակազմին, նրանց անհրաժեշտ գիտելիքներ ուսուցանել և դիրքի անձնակազմին մշտապես միակամ ու մարտունակ վիճակում պահել: Խոսելով մեր Հայրենիքի ապագայի կառուցման մասին, Ռուստամ Սարգսյանն այդ գործընթացում կարևորեց Հայոց բանակի ունեցած տեղն ու դերը: *«Հայոց բանակն այսօր դարձել է լուրջ տարածաշրջանային գործոն, որը թույլ է տալիս արտաքին քաղաքականության բնագավառում պահել ու պաշտպանել մեր երկրի պատիվն ու արժանապատվությունը: Մյուս կողմից՝ թերևս, մեր թշնամուն սանձահարող ամենահուսալի միջոցն է: Մեր հակառակորդն իր ստորությամբ ու նենգ արարքներով կարողացել է մեզանից խլել մեր հայրենիքը՝ դարեր ի վեր նվաճված ու ստորացված պահելով մեզ: Այս ամենը ստիպում է, որ չմոռանանք մեր անցյալը»,* - նշեց նա, իր միտքն ավարտելով հայտնի խոսքերով. ***«Չպետք է մոռանանք դառն անցյալը, որպեսզի ստիպված չլինեք այն նորից վերապրել»***:

Սերոբյան Հայկ Արամի.

«ՄԵՆՔ ՕՐ ՈՒ ԳԻՇԵՐ ԱՆՍԱՍԱՆ ԿԱՆԳՆԱԾ ԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԻՆ»

Ինչպես դիրքապահ տղաներից շատերը, շարքային Հայկ Սերոբյանը նույնպես քչախոս է և մեր հարցերին տալիս է կարճ ու հստակ պատասխաններ: Ինչպես մյուսները՝ ինքը ևս գերադասում է ամեն ինչ գործով ապացուցել, մանավանդ, որ հայրենիքի պաշտպանությունն իրականցնելիս դրա անհրաժեշտությունը ցանկացած պահի առկա է: Ինչ խոսք, ինչպես Հայկն է իր հերթին վստահեցնում, դիրքապահի պարտականությունների իրականացումը դժվար գործ է և ամեն մարդու բան չէ: *«Դիրքապահի պարտականությունների կատարումը, որքան դժվար, այնքան էլ պատվաբեր է, բայց նաև պատասխանատու: Մենք գիտակցաբար ենք կատարում մեր պարտականությունները և, եթե այստեղ՝ սահմանում կանգնած ենք, ապա պետք է ամեն ինչ անենք մեզ վրա դրված խնդիրները կատարելու համար: Շուրջ 14 ամիս է, ինչ կատարում եմ զինվորական պարտքս և թե՛ զորամասի մշտական տեղակայման վայրում, թե՛ դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում իմ պարտականությունները, ինձ տրված առաջադրանքները կատարել եմ ճիշտ ու ժամանակին, և այսուհետ ևս պատրաստ եմ նվիրումով կատարել բոլոր առաջադրանքները»*, - համոզված ասում է շարքային Հայկ Սերոբյանը՝ համոզմունք հայտնելով, որ ծառայության նկատմամբ նման վերաբերմունքը հաջողություն կբերի յուրաքանչյուր զինվորականի:

Հայկ Արամի Սերոբյանը ծնվել է 1998թ. հունիսի 5-ին Էջմիածին քաղաքում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 2016 թվականին զորակոչվել է զինծառայության: Նախքան զորակոչվելը զինծառայության մասին տեղյակ էր այնքան, որքան որ լսել էր հասակակիցներից: Դրանք, ինչպես պարզվեց ծառայության ընթացքում, ոչ միշտ են համապատասխանում իրականությանը. *«Ծառայության ընթացքում առաջացած դժվարություններն ու խնդիրները, որոնց մասին պատմությունները երբեմն դուրս են գալիս առողջ բանականության շրջանակներից, իմ համոզմամբ առավելապես կախված են մարդու ընկալումներից, պատկերացումներից ու դիրքորոշումից, - ասում է շարքային Հ. Սերոբյանն ու հավելում, - բոլորս էլ երիտասարդներ ենք, բոլորս էլ մի նպատակի ենք ծառայում և դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում բոլորս էլ ունենք միմյանց աջակցության կարիքը: Այս հանգամանքը յուրաքանչյուրի համար պարզ է ու հստակ, դրա համար էլ մեր տղաների միջև համերաշխություն է տիրում, որի շնորհիվ խնդիրները հեշտությամբ ենք հաղթահարում, ծառայությունը թեթև է անցնում, օրերն՝ աննկատ»:*

Խոսելով դրքապահի պարտականությունների կատարման ընթացքում հայրենասիրության մասին՝ Հայկը շեշտեց, որ առանց հայրենասիրության հնարավոր չէ այսպիսի ծառայություն կատարելը: *«Մեզանից յուրաքանչյուրը գիտակցում է, որ հայրենիքի սահմանները սկսվում են այստեղից: Այստեղ՝ սահմանում է որոշվում Հայրենիքի մի մասնիկը հանդիսացող մեր ընտանիքների ճակատագրերը: Մենք մեր պարտականությունները կատարելով հնարավորություն ենք ստանում ապահովելու և՛ մեր հարազատների, և՛ մեր երկրի անվտանգությունը»*, - նշում է շարքային Հայկ Սերոբյանը:

Դիրքապահի պարտականությունների կատարման իր փորձից ելնելով՝ Հայկն այդ նվիրական առաքելության կատարման ընթացքում կարևորում է ոչ միայն մասանգիտությանը

տիրապետելը, այլև զգոնությունը, մանավանդ, որ հակառակորդը դիվերսիոն-հետախուզական և դիպուկահարային պատերազմի մարտավարությունն է ընտրել: *«Հենց զգոնության շնորհիվ է, որ մեր դիրքապահներին հաջողվում է ժամանակին նկատել հակառակորդի գործողությունները, խույս տալ կորուստներից և պահպանել սահմանի անառիկությունը: Անձնակազմը ցանկացած պահի պատրաստ է դրան, հոգեպես ամուր է և գործնականում ավելի է կատարելագործում իր ունակությունները հակառակորդի ցանկացած գործողություններից հետո, ձեռք բերում անհրաժեշտ փորձ ու գիտելիքներ տարբեր իրավիճակներում գործելու համար»*, - նշում է շարքային Հայկ Սերոբյանը՝ վստահեցնելով, որ մեր ժողովուրդը կարող է վստահ լինել սահմանի անառիկության հարցում. ***«Մենք օր ու գիշեր անսասան կանգնած ենք Հայրենիքի սահմաններն անառիկ պահելու համար»:***

Սիմոնյան Արմեն Սարգսի.

«ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԵԼՈՒ ԵՆՔ ԱՎԱԳՆԵՐԻ ԹՈՂԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԵԼՈՒ, ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

«Մեկ և կես տարի է, ինչ ծառայում եմ Պաշտպանության բանակում, և կարող եմ վստահաբար ասել, որ ունեմ անհրաժեշտ հմտություններ՝ հրամանատարության կողմից առաջադրված խնդիրները լիարժեքորեն կատարելու համար: Զինծառայողների միջև տիրող ընկերական հարաբերությունները, հրամանատարության հոգատար վերաբերմունքը և հայրենիքին անմնացորդ ծառայելու բոլորիս պատրաստակամությունը թույլ է տալիս վստահեցնելու մեր ժողովրդին, որ ցանկացած պահի պատրաստ ենք պաշտպանել երկիր հայրենին», - դիրքապահի պարտականությունները կատարող շարքային Ա. Սիմոնյանն է վստահեցնում մեզ ու մեր ժողովրդին:

Արմեն Սարգսի Սիմոնյանը ծնվել է 1997 թվականի հուլիսի 28-ին Երևանում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջում, որպես ատամնատեխնիկ: Այն ավարտելուց հետո՝ նրա հոգում արթնացավ մանկուց փայփայած երազանքը և նա որոշեց նոր մասնագիտություն ընտրել, և 2015 թվականին ընդունվեց Էստրադային ու ջազային արվեստի պետական քոլեջը: Զրույցի ընթացքում անկեղծանալով ասում է. *«Իմ հոբբին երգ-երաժշտությունն է, դրա համար էլ փոխեցի մասնագիտությունս: Ինչպես ասում են՝ «լավ է ուշ քան երբեք»:* Իհարկե, այս

հանգամանքից առավելապես շահում են ծառայակից ընկերները, ովքեր ազատ ժամերին վայելում են նրա կատարումները, փոքր ինչ դժգոհելով Արմենի ոճային նախասիրություններից:

Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում Արմենը նախևառաջ կարևորում է զգոնությունը, մանավանդ, որ հակառակորդի դիրքերն այստեղ բավականին մոտ տարածության վրա են գտնվում և դիպուկահարները ցանկացած պահի տղաների անզգուշությունն օգտագործելով կարող են իրենց սև գործը կատարել: Իր հոգում ունենալով հայրենասիրական խորը զգացումներ՝ համոզված է, որ հայրենասիրությունն ու հայրենիքի պաշտպանությունը փոխպայմանավորված են միմյանցով և մեկն առանց մյուսի հնարավոր չէ պատկերացնել:

«Դիրքապահի պարտականությունների կատարումը՝ պատասխանատու, տղամարդուն վայել առաքելություն է: Պատճառը շատ պարզ է. դիրքում կանգնած զինծառայողից՝ նրա զգոնությունից, պատրաստվածությունից ու խիզախությունից է անմիջականորեն կախված մեր հայրենակիցների, հարազատների ու ընկերների խաղաղ և անվտանգ գործունեությունը», - ասում է նա: Այս հանգամանքի գիտակցումը շարքային Ա. Սիմոնյանի մեջ ոչ միայն հպարտություն է առաջացնում, այլև լրացուցիչ լիցքեր հաղորդում, ուժ ու կորով տալիս առաջադրված խնդիրները ճիշտ ու ժամանակին, բարձր մակարդակով կատարելու համար:

Մեր այն հարցին, թե ի՞նչ է ծառայությունը շարքային Սիմոնյանի և ծառայակից ընկերների համար՝ պատասխանում է. *«Քաղաքացիական պարտք, որ կատարել, կատարում և կկատարեն ազգի նվիրյալ զավակները: Գործ, որն իմ կարծիքով պատրաստակամությամբ ու հպարտությամբ պետք է կատարի յուրաքանչյուր հայ տղամարդ: Այժմ մենք ունենք կայացած պետություն և նրա երաշխավորը հանդիսացող բանակ, առանց որի պետությունը գոյություն ունենալ չի կարող: Մենք գիտակցում ենք, որ*

մեր երկրի անվտանգությունն ապահովող բանակի մի մասն ենք: Իսկ որքան ուժեղ են կառույցի առանձին մասերը, այնքան ուժեղ է կառույցն ամբողջապես: Հետևաբար պետք է ուժեղ լինենք, այնպես, ինչպես վայել է հայ արիական ցեղին:

Այսօր մեզ ու մեր սերնդակիցներին է վիճակված ապահովել մեր Հայրենիքի անվտանգությունը, մասնավորապես, պաշտպանել Արցախը: Մենք գիտակցում ենք, թե ինչպիսի թանկ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից ու պապերից: Եվ ամեն ինչ անելու ենք ավագների թողած ժառանգությունը պահելու, պաշտպանելու և հզորացնելու համար»:

Խոսելով առաջադրված խնդիրները բարձր մակարդակով կատարելու մասին՝ նա կարևորեց դրանց ճիշտ ու ժամանակին կատարումը, լինի գիշեր, թե ցերեկ: Կարևորեց նաև կոլեկտիվի միասնությունը և մեկը մյուսին օգնելու պատրաստակամությունը, որն իրենց՝ ծառայակից տղաների միջև առկա է: *«Եթե յուրաքանչյուր զինծառայող մարտական առաջադրանքը կատարելու ընթացքում առաջնորդվի սահմանված կարգի համաձայն, պահպանի անվտանգության կանոնները, ապա արդյունքում մենք ոչ միայն կխուսափենք անտեղի պատահարներից ու կորուստներից, այլև մեզ առաջադրված խնդիրները կկատարենք ճիշտ ու ժամանակին, դրանով իսկ անառիկ դարձնելով մեր հայրենիքի սահմանները»*, - վստահեցնում է շարքային Արմեն Սիմոնյանը:

Սիմոնյան Դավիթ Լևոնի.

«ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՈՐՈՆՔ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ»

Ծառայության ընթացքում լավագույն կողմերով են իրենց դրսևորում այն զինծառայողները, ովքեր աչքի են ընկնում կարգապահությամբ, չեն շեղվում կանոնադրային փոխհարաբերությունների պահանջներից, պատրաստ են ճիշտ և ժամանակին կատարելու ծառայողական պարտականություններն ու հրամանատարության կողմից առաջադրած խնդիրները, ինչպես նաև տիրապետում են իրենց մասնագիտությանը:

Ծառայության անցնելով Պաշտպանության բանակի գնդապետ Արմեն Գյոզալյանի հրամանատարությամբ գործող զորամասում՝ Դավիթն աչքի է ընկել իր կարգապահությամբ, բարեխիղճ ծառայությամբ ու դրական այլ հատկանիշներով: Ստանալով կրտսեր սերժատի, այնուհետև սերժանտի զինվորական կոչում և ստանձնելով դիրքի ավագի պարտականությունները՝ նրա համար պատասխանատվության աստիճանն էլ ավելի է բարձրացել:

Դ. Սիմոնյանը պատմում է, որ երբ առաջին անգամ զորամաս ոտք է դրել, դեռ ամբողջությամբ չէր գիտակցում, թե ուր է եկել, ինչ է իրեն սպասվում, ինչպես պիտի վարվի տարբեր իրավիճակներում: Այս ամենին, սակայն, աստիճանաբար հարմարվել է առաջին ամիսների ընթացքում, ու այդ հիմքի վրա հետագայում կուտակել ծառայողական փորձը, որը ձեռք է բերվում տեսական ու գործնական պարապմունքների, անձնական զրույցների ու շփումների,

սահմանագծում մարտական հերթապահություն իրականացնելու միջոցով:

«Զինծառայությանը հարմարվելու սկզբնական շրջանում մեծ դեր է խաղում կրտսեր հրամանատարների վերաբերմունքը», - նկատում է Դավիթը: «Երբ մի բան ես անում, ու նրանք գնահատում են քո գործն ու քեզ, շահագրգռվում ես ավելի լավ ծառայել»: Այժմ լինելով կրտսեր հրամանատար, ինքն անձամբ փորձում է այդ ամենը բարձր մակարդակի վրա պահել:

«Հրամանատարն ինչ-որ տեղ, ինչ-որ իմաստով հոգեբան պետք է լինի, որպեսզի կարողա հասկանալ զինվորներին, նրանց խնդիրները, ճիշտ ձևով բացատրի յուրաքանչյուրի անելիքները, որպեսզի նրանք իրենց պարտականությունները պարտադրվածի հոգեբանությամբ չկատարեն:

Իբրև կրտսեր հրամանատար, իմ պարտքն եմ համարում իմանալ նաև յուրաքանչյուր զինծառայողի ոչ միայն անձնական, այլև ընտանեկան խնդիրները, նրանց հոգեվիճակը, հակվածությունը վատ արարքների նկատմաբ, թույլ և ուժեղ կողմերը: Այդ նպատակով անընդհատ տղաների հետ զրույցներ եմ ունենում թե՛ զորամասի մշտական տեղակայման վայրում, թե՛ հատկապես դիրքերում: Ես որպես անմիջական հրամանատար՝ պետք է հստակորեն իմանամ, թե ով ինչի է ընդունակ, ինչ խնդիրներ ունի, ինչպիսինն է անձնակազմի միջև տիրող մթնոլորտը, որպեսզի կարողանամ դրան համապատասխան քայլեր ձեռնարկեմ, կազմակերպեմ ծառայությունը», - մեզ հետ զրույցում ասաց սերժանտ Դ. Սիմոնյանը՝ շեշտելով, որ դրա համար պետք է անընդհատ աշխատել վերոնշյալ ուղղություններով և չբավարարվել ձեռք բերածով:

Դավիթ Լևոնի Սիմոնյանը ծնվել է 1997 թվականի դեկտեմբերի 17-ին Դիլիջան քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի սերվիզ բաժինը և ուսման առաջին կիսամյակի

ավարտից հետո՝ 2016 թվականին զորակոչվել ծառայության: Արդեն շուրջ 20 ամիս է ինչ ծառայում է հայրենիքին: Կատարելով դիրքապահի բարդ ու պատասխանատու առաքելությունը՝ նա գիտակցում է, որ յուրաքանչյուր մարտական հերթապահություն ինքնըստինքյան նշանակում է մարտական խնդրի իրականացում, որը միտված է Հայրենիքի անվտանգության ապահովմանը:

«Ինչ վերաբերում է ծառայությանը, ապա ես համոզված եմ, որ դա այն գործն է, որը պետք է հասկանալով կատարել: Առանց նվիրվածության ու անձնազոհության հնարավոր չէ ամուր սահմաններ և ուժեղ Հայրենիք ունենալ, որպեսզի շատ ժողովուրդների պես անհայրենիք չմնա նաև հայությունը: Դա է պատճառը, որ յուրաքանչյուրիս համար զինծառայությունը պետք է լինի սրբազան պարտք, մանավանդ նրանց, ում համար թանկ է հող հայրենին, իրենց նախնիների հիշատակն ու նրանց թողած ժառանգությունը»:

Ամեն անգամ հանդիպելով նման խելացի ու հայրենասեր զինծառայողների՝ ակամայից հիշում ես Գարեգին Նժդեհի խոսքերը, որ ժողովուրդներն առանց հայրենասիրության այն են, ինչ մարմինն առանց հոգու, որ փոքր ազգերը պարտադրորեն ավելի հայրենասեր պետք է լինեն, քան մեծերը, մենք ավելի՝ քան բոլորը:

Ստեփանյան Վարդան Սամվելի.

«ԵԹԵ ԳՏՆՎՈՒՄ ԵՍ ԴԻՐՔՈՒՄ, ՈՒՐԵՄՆ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՍ»

«Մեր դիրքը մի ընտանիք է, որտեղ մեկս մյուսի մասին հոգ ենք տանում, իրար օգնում, սատարում դժվարությունների պահին, փորձում լուծել ծագած խնդիրները՝ գիտակցելով, որ մեկս մյուսով ենք ուժեղ, որ հակառակորդի դեմ պայքարելիս իրար կողքի ենք լինելու ու միասին ենք մարտ վարելու: Նման պայմաններում միմյանց հետ, բացի ընկերական հարաբերություններից, այլ հարաբերություններ հնարավոր չեն», - այսպես է մտածում դիրքապահ Վարդան Ստեփանյանը, ում հետ ծանոթության առիթը դարձավ մեր հերթական այցն առաջնագիծ:

1997թ. օգոստոսի 18-ին ծնված Վարդանը ծնունդով Սպիտակից է: Մինչ զորակոչվելը նա հասցրել է հաճախել համակարգչային-օպերատորական 6-ամսյա դասընթացների ու 2016թ. հունվարից արդեն Պաշտպանության բանակի շարքերում է:

Զորակոչվելուց ընդամենը ամիսներ անց Վարդանն ու իր զինակից ընկերները մասնակիցը դարձան ապրիլյան դիմակայությանը: Այդ օրերի մասին խոսելիս՝ դիրքապահ Ստեփանյանը պատմում է, թե ինչպես էին դիրքի տղաներով համատեղում դիրքապահի իրենց պարտականություններն ինժեներական աշխատանքներ կատարելու հետ. *«Որպես օգնական ուժ էինք՝ առաջնագծի հետևում, երկրորդ գծում կատարում էինք դիրքապահի պարտականություններ, ժամանակի մյուս մասն էլ անց էինք կացնում խրամատներ փորելով»:*

Մեր այն հարցին, թե ո՞րն է կարևորագույն նախապայմանը դիրքապահի ծառայության համար, շարքային Վ. Ստեփանյանը պատասխանում է. *«Անձնակազմի շրջանում տիրող միջանձնային ճիշտ փոխհարաբերությունները, մեկը մյուսի հանդեպ ուշադիր լինելը, բնականաբար՝ զգոնությունը, երբ գտնվում ես մարտական դիրքում, որովհետև քո հետևում կանգնած է մի ամբողջ ազգ, որը վստահում է քեզ, որն իր անվտանգության երաշխիքն է քեզ համարում, քեզ հետ հույսեր է կապում»:*

Անշուշտ, դիրքապահի առաքելությունը պարտավորեցնում է շարքային Ստեփանյանին ու իր զինակիցներին որպեսզի լինեն աչալուրջ, իրար հետ համերաշխ, ամրակցված զենքին տիրապետեն լիարժեքորեն, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվեն ու ճիշտ որոշումներ կայացնեն:

Միջանձնային ճիշտ փոխհարաբերություններին զուգահեռ դիրքապահ Վ. Ստեփանյանը կարևորում է նաև ծառայությանը գիտակցական մոտեցում ցուցաբերելը և, ինչպես պարզ դարձավ հրամանատարության հետ զրույցից, ծառայության առաջին իսկ օրերից Վարդանը հենց այդ ձևաչափով էլ կատարում է իր պարտականությունները՝ ամենայն պատասխանատվությամբ և բարձր զգոնությամբ: *«Եթե չգիտակցենք, որ մեր առաջ կանգնած է հակառակորդ, ով ամեն պահի կարող է անկանխատեսելի պահվածք դրսևորել, չենք կարողանա նրա դեմն առնել, պետք եղած դեպքում՝ հետ շպրտել, - ասում է դիրքապահ Վ. Սրեփանյանն ու ավելացնում, - իրար աջակցելով, մեկս մյուսին թև ու թիկունք լինելով ենք դիրքը մինչև այսօր անառիկ պահում ու նույն կերպ էլ շարունակելու ենք»:*

Վարդանի հետ զրուցելիս խոսք բացեցինք նաև «հայրենասիրություն» հասկացության մասին և թե ինչ է այն նշանակում առաջնագծում կանգնած զինվորի համար, ով երկու տարի անընդմեջ դեմ-դիմաց կանգնում է մահվան առաջ ու աչք չի թարթում: Վարդանի պատասխանը հստակ էր ու միանշանակ. *«Եթե*

գնտվում ես դիրքում, դա արդեն իսկ նշանակում է, որ հայրենասեր ես, որ քեզ համար կարևոր է ընտանիքդ, ազգդ, հայրենիքդ: Ի վերջո այդ արժեքների համար ենք այստեղ կանգնած՝ պատրաստ ամեն պահի պայքարել, եթե փորձեն դիրքը գրավել՝ նույնիսկ կյանքի գնով այն պահել, - փոքր դադարից հետո շարունակում է, - որովհետև, եթե դիրքը գրավեն, կնշանակի վտանգվում է երկրի ու ազգի գոյությունը, իսկ երբ կործանվում է երկիրը, պետությունը՝ կործանվում է ամեն ինչ, այսինքն՝ դու էլ ոչինչ չես ունենա հանուն որի արժե պայքարել ու ապրել»:

Վերջում դիրքապահ Վ. Ստեփանյանը վստահեցրեց, որ մեր ժողովուրդը կարող է անհոգ լինել, որովհետև իր զինվոր զավակները պատրաստ են ամեն վայրկյան հակառակորդին արժանի հակահարված տալ. *«Սա զուտ խոսքեր չեն, սա ապացուցել ենք հենց ապրիլյան դիմակայության օրերին ու պատրաստ ենք ապացուցել նաև այսուհետ, եթե անհրաժեշտություն լինի»:*

Վարդանյան Նարեկ Նորիկի.

«ԲԱՆԱԿՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ ԿՅԱՆՔԻ ՓՈՐՁԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՄԵԿ ԱՅԼ ՏԵՂ»

Օրինակելի զինծառայող լինելու նախապայմաններից մեկն էլ մարդկային վեհ հատկանիշներով օժտված լինելն է, ինչպիսիք են ընկերասիրությունը, ծառայակից ընկերներին սատարելու պատրաստակամությունը, ազնվությունը, ծառայակցի ուրախությունն ու տխրությունը կիսելու կարողությունը: Սրանք այն կարևոր որակներն են նաև, որոնք հնարավորություն են ընձեռում ստեղծելու կուռ և միասնական կոլեկտիվ, որը պատրաստ է պատվով կատարել հայրենիքի պաշտպանի առաքելությունը:

Կրտսեր սերժանտ Նարեկ Նորիկի Վարդանյանը ծնվել է 1998 թվականի փետրվարի 4-ին Վանաձորում: Միջնակարգն ավարտելուց հետո 2016 թվականին զորակոչվել է զինծառայության և ուսումնական դասընթացներն անցնելուց հետո ստացել է կրտսեր սերժանտի զինվորական կոչում՝ նշանակվելով ջոկի հրամանատար: Վերադաս հրամանատարությունը գոհ է կրտսեր սերժանտ Վարդանյանի ծառայությունից, քանզի նա պարտականությունների կատարման ընթացքում միմիայն Հայոց բանակի զինվորին վայել լավագույն կողմերով է իրեն դրսևորել:

Արդեն բավականին ժամանակ է ինչ կատարում է դիրքի ավագի պարտականությունները և հնարավորություն ու ժամանակ է ունեցել մտորելու և հասկանալու «Հայրենիք» հասկացության արժեքն ու զինծառայության տեղն ու դերը մեր ժողովրդի հարատևության գործընթացում: Հպարտ է, որ հաղթանակած բանակի զինվոր է,

ծառայում է մի երկրամասում, որը շնորհիվ մեր նվիրյալ հայորդիների, նրա ըմբոստ ժողովրդի, կարողացավ պահպանել իր հայեցիությունը՝ դառնալով հայ ժողովրդի պարծանքն ու հպարտությունը:

«Հայրենիքը փարողունակ գաղափար է, որի մեջ մտնում են բազմաթիվ գործոններ: Զինծառայությունն առավել քան որևէ այլ մասնագիտություն՝ օգնում է ավելի ճիշտ ընկալել հայրենիքն ու նրա սահմաններից դուրս ընթացող գործընթացները: Հայրենասիրությունն իր հերթին օգնում է համապատասխան վերաբերմունքով ուսուցանել մյուսներին իրենց անելիքները: Իսկ բանակային փարիներին ձեռք բերած գիտելիքներն ու կյանքի փորձը հնարավոր չէ մեկ այլ տեղ ձեռք բերել: Խոսքը ոչ միայն զինվորական մասնագիտության մասին է, որն ինքնին հասկանալի է, այլ նաև կոլեկտիվ ապրելակերպի, կոլեկտիվ մտածողության և որևէ քայլ անելուց առաջ մյուսների կարծիքներն ու ցանկությունները հարգելու մասին է»:

Ըստ կրտսեր սերժանտ Ն. Վարդանյանի՝ զինծառայությունը մարդուն օգնում, ինչ-որ տեղ նաև ստիպում է սեփական ժամանակը, սեփական անելիքները ճիշտ պլանավորել: Ոչ միայն այն պատճառով, որ այստեղ գործում է օրվա կարգացուցակի հստակ ռեժիմ՝ առավոտյան վերկացից մինչև քուն: *«Դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում թույլ տրված յուրաքանչյուր սխալ արարք ճակատագրական նշանակություն կարող է ունենալ ողջ անձնակազմի համար: Եվ ոչ միայն: Դիրքի ավագը հանդիսանում է ողջ անձնակազմի և Հայրենիքի սահմանի իրենց վստահված հատվածի պահպանության ու պաշտպանության պատասխանատուն: Հետևաբար պետք է հստակորեն պահպանել սահմանված կարգուկանոնը, ժամանակին կատարել հերթափոխը, որպեսզի դիրքապահները հնարավորություն ունենան նաև հանգստանալու: Ընդհանրապես, դիրքերում պետք է խստորեն*

պահպանել արդարության սկզբունքը, որպեսզի որևէ մեկն իրեն ընկճված չզգա, որպեսզի միասնական ուժերով կարողանանք կատարել առաջադրված խնդիրները: Ճիշտ է, զինծառայության ընթացքում խնդիրներ ևս լինում են, բայց դրանք փորձում ենք լուծել սեփական ջանքերով կամ հրամանատարության աջակցությամբ», - զրույցի ընթացքում շեշտում է կրտսեր սերժանտ Ն. Վարդանյանն ու հավելում, որ հենց այդպիսի գիտակցված ու նպատակաուղղված աշխատանքն է, որ իմաստալից է դարձնում զինվորականի ծառայությունը:

Եթե լինում է ազատ ժամանակ, ապա Նարեկն այդ ընթացքում ինքնապատրաստությամբ է զբաղվում՝ ձգտելով ավելի հարստացնել գիտելիքները: Ընդհանուր առմամբ նա աչքի էր ընկնում զարգացման բարձր մակարդակով և մեզ հետ զրույցի ընթացքում շոշափում էր ավելի լայն ասպեկտներ ունեցող խնդիրներ: Այս իմաստով նա հատկապես կարևորում է ղարաբաղյան հակամարտությունը և նշում, որ զինծառայության ընթացքում ավելի է համոզվել, որ հզոր բանակ ունենալն անհրաժեշտ է հստակ ու անշեղ արտաքին քաղաքականություն վարելու, մեր պետականության առջև ծառացած մարտահրավերները լուծելու և ընդհանրապես հայ ազգի հարատևությունն ապահովելու համար:

Փիրոև Գարիկ Ծերունի.

«ԻՆՉՊԵՍ ՄԵՐ ՕՋԱԽԸ ԿՊԱՇՏՊԱՆԵՆՔ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԴԻՐՔԸ ՊԱՀԵԼ ՈՒ ՊԱՇՏՊԱՆԵԼ»

«Նախքան զորակոչվելս, կարելի է ասել, պատկերացում չունեի դիրքերի ու դիրքապահի ծառայության մասին: Գալով դիրքեր և կատարելով Հայրենիքի պաշտպանի գործը՝ սկսել եմ ավելի կարևորել «Հայրենիք» հասկացության արժեքն ու էությունը: Չնայած դժվարություններին՝ մենք գիտակցում ենք մեր գործի կարևորությունը ամբողջ ազգի հարատևման հարցում: Հենց այդ գիտակցումն է պատճառը, որ մեզանից ոչ մեկը չի տրտնջում և ցանկացած պահի պատրաստ է հակառակորդին արժանի հակահարված հասցնել», - նշում է մեր զրուցակից եֆրեյտոր Գ. Փիրոևը՝ հավելելով, որ այդ գործում իրեն օգնել և ունեցած փորձը փոխանցել են հրամանատարներն ու ավագ ընկերները:

Եֆրեյտոր Գարիկ Ծերունի Փիրոևը ծնվել է 1997 թվականի օգոստոսի 31-ին Կոտայքի մարզի Արզնի գյուղում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է Աբովյանի պետական ճարտարագիտական քոլեջի ծրագրավորման բաժնում և 4-րդ կուրսից զորակոչվել զինծառայության:

Ինչպես յուրաքանչյուր բնագավառում, դիրքապահի պարտականությունների կատարման ընթացքում ևս եֆրեյտոր Փիրոևը կարևորում է կարգապահությունն ու միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը: Ինչ վերաբերում է վտանգավորությանն ու վախի զգացողությանը, ապա դա ժամանակի ու գիտակցության

խնդիր է: Բոլոր դեպքերում, ինքն անձամբ դիրքերում ծառայելը նախընտրում է մշտական տեղակայման վայրում ծառայելուց, որը դարձել է երկրորդ օջախը: *«Չնայած վտանգավորությանն ու պատասխանատվությանը, ես անձամբ նախընտրում եմ դիրքերում ծառայությունը: Մենք մեզ այստեղ ավելի ազատ ենք զգում, ավելի արժևորված մեր կատարած գործում: Պետք է ասեմ, և կարծում եմ դիրքապահներից շատերն էլ համամիտ են կարծիքիս, որ ժամանակի ընթացքում դիրքն, իրոք, դիրքապահի համար երկրորդ օջախ է դառնում: Եվ ինչպես մեր օջախը կպաշտպանենք, այնպես էլ պատրաստ ենք դիրքը պահել ու պաշտպանել: Իսկ դրա համար, ինչպես նաև վտանգի չեզոքացման նպատակով, պետք է ամենայն լրջությամբ կատարենք սեփական պարտականությունները, որպեսզի կարողանանք ժամանակին հավաստանշել հակառակորդի տեղաշարժը և ձեռնարկենք անհրաժեշտ քայլեր, - նշում է եֆրեյտոր Փիրոևը:*

Նա մեծ պատիվ և պատմական իրողություն է համարում Հայոց հաղթանակած բանակում հայրենիքն ծառայելը և այն համոզման է, որ բոլորն էլ կարող են հաջողություններ ունենալ թե՛ զինծառայության ընթացքում, թե՛ քաղաքացիական կյանքում: Դրան կարելի է հասնել աշխատասիրությամբ, ինքնուսուցմամբ և առավելագույնին հասնելու նպատակասլացությամբ: Բայց դրա համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուրը պատասխանատվությամբ մոտենա իր աշխատանքին, պահպանի կարգապահության այն նորմերը, որոնք ձևավորվել են տասնամյակների փորձի ընթացքում, դարձել հայրենիքի պաշտպանության՝ ասել է թե գոյապահպանման անհրաժեշտ նախապայման:

Զինծառայության մեջ հաջողության հասնելու կարևորագույն սկզբունքներից մեկն էլ, ըստ եֆրեյտոր Փիրոևի, ընկերասիրությունն է, առանց որի անհնարին է ոչ միայն զինծառայողների համատեղ

այլև տարբեր ստորաբաժանումների կեցությունն ու համատեղ գործողությունների իրականացումը:

«Փորձը ցույց է տալիս, որ եթե յուրաքանչյուրը ճշտությամբ կատարի իր պարտականությունները, ապա հակառակորդը կձախողվի իր մտադրություններում: Դա են ապացուցում հակառակորդի դիվերսիոն ներթափանցման անհաջող փորձերն ու ապրիլյան մարտական գործողությունները: Ճիշտ է, ապրիլյան գործողությունների ժամանակ ես դիրքերում չէի՝ նոր էի զորակոչվել ծառայության, բայց գիտեմ, թե ինչպես են ավագ ընկերներս կռվել, ձախողել հակառակորդի մտադրությունները, պաշտպանել այս դիրքը և հենց այս դիրքում կործանել նրանց ուղղաթիռը: Այս ամենը մեզ լրացուցիչ ուժ է տալիս, պարտավորեցնում ավելի պատասխանատվությամբ կատարել մեր պարտականությունները», - մեզ հետ զրույցում իր մտորումներով կիսվում է եֆրեյտոր Փիրուզը՝ կատակով ավելացնելով, որ, ինչպես ասում են, մենք հայ ենք և ոչնչից չենք վախենում, իսկ դժվարություններն ու խնդիրները հաղթահարելը պարզապես յուրաքանչյուրի առօրյայի մասնիկն է:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՐԱՅՐ ԱԲՐԻԿԻ ՓԱՇԱՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ Լ Ա Վ Ա Գ ՈՒ Յ Ն ԴԻՐՔԱՊԱՀՆԵՐԸ

Խմբագիր՝ Ե.Հարությունյան
Սրբագրիչ՝ Ի.Սարգսյան
Կազմի ձևավորումը՝ Ա.Երամիշյանի

Գրքի էլեկտրոնային տարբերակը հասանելի է Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման www.aegmm.org կայքում:

Ստորագրված է տպագրության՝ 01.10.2017թ.:

Չափսը՝ 14,8*21, Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 7 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 200:

Տպագրված է «Լազերքոփի» ՍՊԸ-ում:

ՀՀ, ք.Երևան, Կորյունի 11/11: